ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սոցիալ-տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված էր մակրոտնտեսական կայունության ապահովմանը, տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանմանը` զուգահեռաբար իրականացնելով զարգացմանն ուղղված բարեփոխումները:

2014 թվականին տնտեսական աճը հանրապետությունում կազմել է 8.9 տոկոս: Անվանական արտահայտությամբ համախառն ներքին արդյունքը (այսուհետ` ՀՆԱ) կազմել է 188.8 մլրդ ՀՀ դրամ (2013 թվականին` 168.6 մլրդ ՀՀ դրամ): Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1,268.1 հազ. ՀՀ դրամ կամ 3,048.9 ԱՄՆ դոլար` նախորդ տարվա 1,137.9 հազ. ՀՀ դրամի կամ 2,777.9 ԱՄՆ դոլարի դիմաց:

2014 թվականին արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 52.0 մլրդ ՀՀ դրամ` 2013 թվականի համեմատ իրական արտահայտությամբ աճելով 17.2 տոկոսով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 57.3 մլրդ ՀՀ դրամ` 2013 թվականի 55.2 մլրդ ՀՀ դրամի դիմաց` իրական արտահայտությամբ նվազելով 4.3 տոկոսի չափով:

Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 50.5 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 11.7 տոկոսով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2014 թվականին կազմել է 366.7 մլն ԱՄՆ դոլար` 2013 թվականի համեմատ աճելով 11.6 տոկոսով, ընդ որում ներմուծման ծավալները աճել են 12.3 տոկոսով` կազմելով 302.0 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտահանման ծավալները` 8.4 տոկոսով և կազմել են 64.7 մլն ԱՄՆ դոլար:

2014 թվականին 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 415.92 ՀՀ դրամ (2013 թվականին` 409.63 ՀՀ դրամ), 1 եվրոինը` 552.11 ՀՀ դրամ (2013 թվականին` 544.12 ՀՀ դրամ):

Հաշվետու տարում առևտրի շրջանառության ծավալը կազմել է 116.3 մլրդ ՀՀ դրամ` 2013 թվականի համեմատ նվազելով 2.4 տոկոսով, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը` 19.6 մլրդ ՀՀ դրամ` 2013 թվականի համեմատ աճելով 3.0 տոկոսով:

Զբաղվածների (վարձու աշխատողների) թվաքանակն ըստ տնտեսության տարբեր ճյուղերի 2014 թվականին կազմել է 45960 մարդ: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 72 նոր աշխատատեղ:

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը 2014 թվականին կազմել է 134,310 ՀՀ դրամ, 2013 թվականի համեմատ անվանական աճը կազմել է 4.4 տոկոս:

Տնտեսական աճին և զբաղվածությանը զուգահեռ ավելացել են բնակչության դրամական եկամուտները և ծախսերը: 2014 թվականին բնակչության դրամական եկամուտները 2013 թվականի համեմատ ավելացել են 10.6 տոկոսով՝ կազմելով 150.9 մլրդ ՀՀ դրամ, դրամական ծախսերը աճել են 10.9 տոկոսով՝ կազմելով 150.5 մլրդ ՀՀ դրամ:

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ առևտրային բանկերի վարկային ներդրումները կազմել են 97.5 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 18.7 տոկոսով, բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների գումարը կազմել 30.6 մլրդ ՀՀ դրամ՝ 2013 թվականի 25.6 մլրդ ՀՀ դրամի դիմաց (աճը՝ 19.6 տոկոս):

Սպառողական գների ինդեքսը 2014 թվականին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ կազմել է 104.5 տոկոս:

Տնտեսական քաղաքականություն

Տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը շարունակում է մնալ տնտեսական քաղաքականության հիմնական գերակայությունը՝ որպես երկրի կայուն զարգացման կարևորագույն գրավական: Այս համատեքստում շարունակվել է իրականացվել ներքին առկա ռեսուրսների արդյունավետ և համակարգված օգտագործման վրա հիմնված տնտեսական քաղաքականություն:

2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության իրականացրած աշխատանքներն ուղղված էին որակական տնտեսական զարգացման ապահովմանը, տնտեսության և նրա տարբեր ճյուղերի դիվերսիֆիկացման խթանմանը, գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ պայմանների ապահովմանը, գործարարների և սպառողների իրավունքների ու շահերի համակողմանիորեն պաշտպանվածությանը, պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունավետության բարձրացմանը, տնտեսվարող սուբյեկտների արտահանման կարողությունների զարգացմանը:

Տնտեսական զարգացման քաղաքականությունը 2014 թվականին իրականացվել է հետևյալ ռազմավարական ուղղություններով.

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը շարունակել է աշխատանքներ իրականացնել փոքր ու միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացման, պետական աջակցության խորացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած՝ ՓՄՁ պետական աջակցության 2014 թվականի ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները:

2014 թվականին «ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման» ենթածրագրի շրջանակում Արցախի ներդրումային հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի միջոցներով ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 1,578.9 մլն ՀՀ դրամի չափով վարկ: ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորմանը Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից ուղղվել է 562.5 մլն ՀՀ դրամ:

«ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրի շրջանակում հրատարակվել է «Արցախի արդյունաբերող 2» 6-րդ տեղեկատվական պարբերականը, որն ընդգրկում է ընդհանուր տվյալներ և ցուցանիշներ արդյունաբերության ոլորտի մասին, տեղեկություններ բնագավառում գործող որոշ ընկերությունների մասին: Հրատարակվել են «Ներդրողի ուղեցույց» տեղեկատվական գրքույկի հայերեն և ռուսերեն տարբերակները, որոնք ընդհանուր տեղեկություններ են պարունակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալ-տնտեսական մի շարք ցուցանիշների, արդիական գործարար գաղափարների մասին:

«ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներում առաջմղմանն աջակցություն» ծրագրի շրջանակում ապահովվել է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը մի շարք միջոցառումների: Մասնավորապես, մասնակցություն է ապահովվել «Երևան էքսպոկենտրոն» ցուցահանդեսային կենտրոնում կայացած «Զբոսաշրջություն, հանգիստ և ժամանց» և «Պրոդէքսպո Արմենիա» սննդամթերքի ցուցահանդեսներին, Ամերիկայի Միացյալ Նահանգներում կայացած «Wine and spirits wholesalers of America» ալկոհոլային խմիչքների 17-րդ ցուցահանդեսին, Երևան քաղաքում կայացած «ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆ ԷՔՍՊՈ 2014»

ցուցահանդեսին: Մասնակցություն է ապահովվել նաև Ծաղկաձոր քաղաքում կայացած Հայ-Ռուսական տնտեսական համաժողովին:

Կազմակերպվել է Արցախյան բիզնես համաժողով, որի նպատակը Արցախի, Հայաստանի և այլ երկրներից ժամանած գործարարների միջև կապերի հաստատումն էր: Արցախից համաժողովին մասնակցեցին մոտ 50 ՓՄՁ սուբյեկտներ և պաշտոնատար անձինք: Հայաստանից ժամանած գործարարները այցելեցին արցախյան որոշ ընկերություններ և կառույցներ՝ ներկայացնելու կոնկրետ առաջարկներ:

Ծրագրի շրջանակներում արցախյան 14 ընկերությունների համար պատրաստվել են ինտերնետային կայքեր:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում

Կարևորելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական աճի և տնտեսական մրցունակության ապահովման գործում բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի դերը՝ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից էր գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավման ապահովումը՝ նպատակ ունենալով այն դարձնել երկրի մրցակցային առավելություններից մեկը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված՝ գործարարությամբ զբաղվելու հետ առնչվող վարչարարական ընթացակարգերի պարզեցմանը, փոքր և միջին ձեռնարկությունների աճի խթանմանը, հարկային հաշվետվությունների կրճատմանը և պարզեցմանը, հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված «Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի» շրջանակներում 2014 թվականին իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

- ներդրվել է եկամտային հարկի հաշվարկների էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգը.

- աշխատանքներ են իրականացվել E-registry համակարգի համար անհրաժեշտ իրավական հիմքերի ստեղծման ուղղությամբ, որի միջոցով առևտրային տիպի ընկերությունների համար հնարավորություն կընձեռնվի ապահովել էլեկտրոնային գրանցում, կպարզեցվեն ընթացակարգերը, կկրճատվեն ժամկետները.

- համապատասխան պետական մարմինների կողմից մշակվել են իրենց գործունեության ոլորտին վերաբերող անհրաժեշտ գործողությունների ուղեցույցեր և

տեղադրվել համապատասխան կայքէջերում, որտեղ հստակ երևում են դրանց իրականացմանն անհրաժեշտ քայլերը, հերթականությունը և իրավական հիմքերը:

Ծրագրում ներառված միջոցառումների իրականացումից ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման շարունակականության ապահովումը, հետևողական գործողությունների իրականացմամբ գործարարությամբ զբաղվելու գործընթացի դյուրացումը:

Սպառողական շուկա

Առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված էր ոլորտի գործունեության կանոնակարգմանը, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացմանը: Լայն սպառման որոշ ապրանքատեսակների շրջանառության ծավալների նկատմամբ հսկողություն սահմանելու և դրոշմապիտակներով հաշվառման համակարգի կիրառության շրջանակը ընդլայնելու նպատակով մշակվել է «Առևտրի և ծառայությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը, որն ընդունվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 2014 թվականի սեպտեմբերի 18-ին:

Ստանդարտացման բնագավառում «Ստանդարտացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչը», որն ընդունվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N 106-Ն հրամանով:

Կատարվել է 26 տնտեսավարող սուբյեկտների տեխնիկական պայմանների փորձաքննություն և գրանցում:

Չափումների միասնականության ապահովման բնագավառում ստուգաչափման են ենթարկվել 1093 տարբեր տեսակի կշեռքներ, 288 հատ կշռաքարեր, 62 վառելիքաբաշխիչ աշտարակներ, 8431 գազի և էլեկտրական հաշվիչներ, 20 հատ ավտոմոբիլային կշեռքներ, 93 հատ ավտոմոբիլային սակահաշվիչներ և արագաչափեր, 7 հատ ավտոցիստեռն և 76 հատ այլ չափման միջոցներ:

Համապատասխանության գնահատման բնագավառում հանրային սննդի 49 և արտադրական 58 օբյեկտների տրվել են համապատասխանության սերտիֆիկատներ:

Կատարվել է համապատասխանության հսկողություն սննդի ծառայություններ իրականացնող 31 և սննդամթերքներ արտադրող 14 տնտեսավորող սուբյեկտներում:

Հավատարմագրվել են 4 տնտեսավարող սուբյեկտների փորձարկման լաբորատորիաներ:

Պարբերական վերահսկողության են ենթարկվել նախկինում հավատարմագրված 4 տնտեսավարող սուբյեկտների փորձարկման լաբորատորիաներ:

Սպառողների շահերի պաշտպանության ոլորտում ստուգումներ են իրականացվել 82 տնտեսավարող սուբյեկտներում՝ նպատակաուղղված չափման միջոցների ստուգաչափման պահանջների, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով և տեխնիկական կանոնակարգերով նախատեսված պահանջների կատարմանը:

Հիփոթեքային վարկային շուկա

2014 թվականին շարունակվել է առևտրային բանկերի միջոցով հիփոթեքային վարկավորմամբ բնակարանների և բնակելի տների ձեռքբերմանը պետական աջակցության ծրագրի իրականացումը հետևյալ ուղղություններով.

- «Հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրով 271 քաղաքացու տրամադրվել է 2,295.1 մլն ՀՀ դրամի վարկ: Տարվա ընթացքում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանն ուղղված գումարը կազմել է 534.4 մլն ՀՀ դրամ,

- «Հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառությամբ տրամադրում» ծրագրին ուղղվել է 38.8 մլն ՀՀ դրամ՝ ֆինանսավորվել են 19 քաղաքացիներ,

- «Իրացնելու նպատակով բնակարանների (առանձնատների) կառուցում և գնում» ծրագրին ուղղվել է մոտ 1.4 միլիարդ ՀՀ դրամ,

- «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների կողմից բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցություն» ծրագրի շրջանակներում բնակարան ձեռք բերելու նպատակով փոխառություն են ստացել 20 ընտանիք 284.4 մլն ՀՀ դրամի չափով, որնցից 18 ընտանիք բնակարան են ձեռք բերել Շուշի քաղաքում, իսկ 2 ընտանիք՝ Հադրութ քաղաքում,

-«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության ծառայողների կողմից բնակարանների և բնակելի տներ ձեռք բերելու ֆինանսական աջակցություն» ծրագրին ուղղվել է 23.7 մլն ՀՀ դրամ,

-«Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին» ծրագրով փոխառություն է տրամադրվել 53 ընտանիքի: 62 ընտանիք ստացել են երկրորդ և հաջորդ

փուլերի փոխառությունները: Տարվա կտրվածքով տրամադրված փոխառությունների ընդհանուր գումարը կազմել է 196.6 մլն ՀՀ դրամ:

Գյուղատնտեսություն

Որպես երկրի տնտեսության առաջատար ճյուղի՝ գյուղատնտեսության ոլորտում 2014 թվականի ընթացքում վարվող քաղաքականությունը նպատակաուղղված է եղել հողօգտագործման ու անասնապահության վարման կատարելագործման միջոցով գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացմանը, ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան աշխատանքների կատարմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը:

2014 թվականին գյուղատնտեսության ոլորտին պետական բյուջեից հատկացված միջոցները (առանց պետական կառավարչական հիմնարկների պահպանման ծախսերի) ուղղվել են հետևյալ ծրագրերի իրականացմանը՝

- **«Աջակցություն «Բույսերի պաշտպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը»** ծրագիրն իրականացնելու նպատակով 2014 թվականին պետպատվերով հատկացվել է 30,031.0 հազ. ՀՀ դրամ.

Հաշվետու տարում **«Բույսերի պաշտպանության ծառայություն»** պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվել է նաև թունանյութերի 150 նմուշի լաբորատոր հետազոտություն (անալիզ), հանքային պարարտանյութերի 10 (22 նմուշ) անալիզ, հողերի ագրոքիմիական 838(4190 նմուշ)անալիզ.

-**«Մշակաբույսերի սերմերի որակի ստուգման և սորտափորձարկման գծով պետական պատվեր»** ծրագրով «Սերմնաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով սորտափորձարկման է դրվել գյուղատնտեսական մշակաբույսերի 36 սորտ: Լաբորատոր քննությամբ ստուգվել են հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաների սերմերի համապատասխանաբար 360 և 40 նմուշներ: Հրապարակվել են սելեկցիոն նվաճումների 24 պետական գրանցամատյաններ.

- «**Բույսերի պաշտպանության միջոցառումներ»** ծրագրով հանրապետության տարածքում թթենու վահանակրի դեմ պայքարն իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 950լ դանադիմ և 500լ ֆուֆանոն թունանյութ, «Բույսերի պաշտպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով կազմակերպվել

են պայքարի աշխատանքներ այդ վնասատուների դեմ ու վերահսկողություն է սահմանվել միջոցառումների ճիշտ իրականացման նկատմամբ:

Հանրապետությունում կայուն բուսասանիտարական վիճակի ստեղծման նպատակով շուրջ 66.2 հազար հա-ի վրա կատարվել են ցանքսերի դաշտային հետազոտություններ և բուսասանիտարական վիճակի ուսումնասիրություններ: Արդյունքում ավելի քան 43.6 հազար հա-ի վրա կատարվել են մկնանման կրծողների, իսկ շուրջ 762 հա-ի վրա՝ մորեխանման վնասատուների դեմ պայքարի կազմակերպման աշխատանքներ 2,548.6 հազ. ՀՀ դրամի չափով.

- **Անասնաբուժական հակահամաճարակային նախազգուշական միջոցառումների** իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 6-ի թիվ 49 որոշմամբ սահմանված 14 հիվանդությունների դեմ (պաստերելյոզ, սալմոնելյոզ, ԼՏՖ -130, կատաղություն, բրադզոտ, լեպտոսպիրոզ և այլն) գնվել են կենսապատվաստուկներ և այլ անհրաժեշտ պարագաներ, որոնք բաշխվել են ըստ անասնաբուժական կայանների.

- **Անասնաբուժական և սանիտարական սպասարկման միջոցառումների** իրականացման համար անասնաբուժական կայաններին և «Հանրապետական անասնաբուժական և սննդամթերքի փորձաքննությունների լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պետական բյուջեից հատկացված միջոցներով իրականացվել են գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների նկատմամբ ավելի քան 1.5 մլն կանխարգելիչ սրսկումներ և արյան քննություն՝ 122,093 նմուշ.

- **«Հանրապետական անասնաբուժական և սննդամթերքի փորձաքննությունների լաբորատորիա»** պետական ոչ առևտրային կազմակերպությունը իրականացրել է նաև թունաբանական հետազոտություն՝ 110 նմուշ, մանրէաբանական հետազոտություն՝ 356 նմուշ, շիճուկաբանական հետազոտություն՝ 29,599 նմուշ և մակաբուծական հետազոտություն՝ 209 նմուշ.

- «**Խորհրդատվական և տպագրական ծառայությունների ու մոնիթորինգի կազմակերպում»** ծրագրի շրջանակում տպագրվել են ձեռնարկներ, ձեռք են բերվել մասնագիտական ամսագրեր, թերթեր, բենզին, ինչպես նաև տարբեր այլ ծառայություններ.

- **«Գյուղտեխնիկայի պետհամարանիշերի և հատուկ փաստաթղթերի պատվիրում»** ծրագրի իրականացման համար ձեռք են բերվել գյուղտեխնիկայի պետհամարանիշեր և տրակտորիստ – մեքենավարի վկայականներ.

-**«Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումներ»** ծրագրով իրականացվել են 257 գլուխ խոշոր եղջերավոր անասունների սերմնավորման աշխատանքներ.

- **«Աջակցություն Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին»** ծրագրի գումարը կազմել է 820.0 մլն ՀՀ դրամ:

Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր.

- **«Պարարտանյութերի, սերմերի, դիզվառելիքի և ազնվացեղ խոշոր եղջերավոր անասունների արժեքի մասնակի սուբսիդավորում»** ծրագրով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին աջակցելու նպատակով 350.0 մլն ՀՀ դրամ գումարի չափով սուբսիդավորվել են ձեռքբերված սերմերը և դիզվառելիքը՝ 271,068.0 կգ կարտոֆիլ, 90,227.2 կգ եգիպտացորեն, 4,060.0 կգ սոյա, 720 փաթեթ լոլիկ, 50 փաթեթ բիբար, 50 փաթեթ բադրիջան, 30 փաթեթ գազար, 1,394,0 տ դիզվառելիք, ինչպես նաև 117 գլուխ տոհմային ցուլիկներ 32,142.0 կգ կենդանի քաշով.

- **«Սև ցել կատարողներին աջակցություն»** միջոցառման շրջանակում հողերի բերրիության վերականգնման և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով հատկացվել են գումարներ սև ցելի մշակության համար: Արդյունքում, 2014 թվականին սև ցելի տակ թողվել է 1,584.0 հա տարածք.

- **«Ենթաշրջանային ծրագրերի իրականացում»** միջոցառման շրջանակում իրագործվել են Հադրութի շրջանի Ուխտաձորի և Տողի, Ասկերանի շրջանի Խրամորթի, Մարտունու շրջանի Վերին ենթաշրջանների գյուղատնտեսության զարգացման ծրագրերը, իրականացվել են գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնող ենթակառուցվածքների բարելավման միջոցառումներ. համայնքների համար ձեռք են բերվել խոշոր և մանր եղջերավոր անասուններ, իրականացվել են դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման, ոռոգման համակարգի բարելավման, բազմամյա կերային խոտաբույսերի մշակության, պտղատու այգիների հիմնադրման և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման աշխատանքներ.

-**«Արտեզյան ջրհորների վերանորոգում»** միջոցառման շրջանակներում կատարվել են նախկինում գործող 4 արտեզյան ջրհորների վերանորոգման և 2 նոր ջրհորների հորատման աշխատանքներ Մարտունու շրջանի Բերդաշեն, Գիշի և Կաքավաձոր համայնքներում.

- **«Սերմնաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից վարձակալված հողատարածքների վարձավճարների փոխհատուցում»** միջոցառման ծախսը կազմել է 19,789.9 հազ. ՀՀ դրամ.

- **«Աջակցություն «Տոհմային կայան» փակ բաժնետիրական ընկերությանը»** միջոցառման շրջանակներում ընկերությանը ցուցաբերվել է աջակցություն 2014 թվականին ունեցած պարտավորությունների մարման նպատակով.

-**«Փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցություն»** միջոցառման շրջանակներում ցուցաբերվել է աջակցություն «Լուսակերտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը.

-**«Տոհմային կայան» փակ բաժնետիրական ընկերության համար կապիտալ վերանորոգման աշխատանքների** իրականացման ծրագրով կատարվել են շինարարական աշխատանքներ.

- **«Անասնաբուժական սպասարկման կայանների կառուցում, վերանորոգում»** ծրագրով կառուցվել և շահագործման է հանձնվել «Շուշիի անասնաբուժական սպասարկման կայան» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչական շենքը.

- **«Հանրապետական անասնաբուժական լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության համար լաբորատոր սարքավորումների և պարագաների ձեռքբերում»** ծրագրով լաբորատորիայի վերազինման համար ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ, քիմիական նյութեր և սննդարար միջավայրեր.

- **«Կենտրոնացված կարգով գույքի և սարքավորումների ձեռքբերում»** ծրագրով ձեռք է բերվել երկու տրանսպորտային միջոց, գույք, սարքավորումներ և ըստ անհրաժեշտության բաժանվել ենթակա հիմնարկներին:

<u>Քաղաքաշինություն</u>

Քաղաքաշինությունը, լինելով տարածքային կազմակերպման և զարգացման, ազգաբնակչության արտադրողական ուժերի ու միջոցների տեղաբաշխման, բնակավայրերի ու միջբնակավայրային տարածքների կապերի, կառուցապատման ու հատակագծման հիմքը, ապահովում է տարածքների ծրագրավորման, ճարտարապետության, տարածքների ինժեներական պաշտպանվածության, բնակարանային-կոմունալ տնտեսության, տարածքների հատակագծման և տարաբնակեցման համակարգերի ձևավորման և դրանց նպատակային ուղղությունների

ու գերակայությունների, շինարարության և շինինդուստրիայի բնագավառների գործունեությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում կապիտալ ներդրումների ծավալը կազմել է 14,220.1 մլն ՀՀ դրամ: 2014 թվականին կապիտալ ներդրումների պետական պատվերով կատարված աշխատանքների տվյալներն ըստ ճյուղերի հետևյալն են:

<u>**Բնակարանաշինության ոլորտում**</u> աշխատանքները իրականացվել են հետևյալ ծրագրերով.

1. **Զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակարանների վերանորոգման և կառուցման** նպատակով պետական բյուջեից հատկացվել է 370.1 մլն ՀՀ դրամ,

2. **Այլ սոցիալական խմբերին պատկանող ընտանիքների բնակելի տների վերանորոգման և կառուցման** նպատակով 2014 թվականին հատկացվել է 206.6 մլն ՀՀ դրամ,

3. **Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների իրականացման** նպատակով 2014 թվականին բնակարանաշինության համար հատկացվել է 454.6 մլն ՀՀ դրամ:

<u>**Կրթության ոլորտում**</u> շարունակվել են աշխատանքները դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնադաստիարակչական պրոցեսը հարմարավետ շենքային պայմաններում կազմակերպելու ուղղությամբ: Այդ նպատակով 2014 թվականին կատարվել են 1,520.3 մլն ՀՀ դրամի կապիտալ ներդրումներ:

2014 թվականին «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ համաֆինանսավորման սկզբունքով կատարվել են 1,337.1 մլն ՀՀ դրամի կապիտալ ներդրումներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության և «Հայաստան» համահայկական հիմնադրամի համաֆինանսավորման ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են Ստեփանակերտ քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի շենքի վերակառուցման (1-ին փուլ), Շուշիի շրջանի Քարին տակ գյուղի դպրոցի, մարզադահլիճի կառուցման և Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական ուսումնարանի, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության շենքերի, Մարտակերտի շրջանի Չափար գյուղի 84 տեղանոց դպրոցի շենքի կառուցման աշխատանքները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվել են Ստեփանակերտ քաղաքի թիվ 1 և թիվ 6 նոր դպրոցական համալիրների

կառուցման, ինչպես նաև ընթացքի մեջ է «ԹՈՒՄՈ» ուսումնական կենտրոնի շենքի վերանորոգման աշխատանքները:

2014 թվականին կապիտալ ներդրումները <u>**մշակույթի և սպորտի**</u> բնագավառում կազմել են 333.7 մլն ՀՀ դրամ:

<u>**Հասարակական և վարչական նշանակության**</u> օբյեկտներում կատարվել են կառուցման և վերանորոգման աշխատանքներ 560.8 մլն ՀՀ դրամի չափով:

<u>**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ավտոճանապարհների վերակառուցման, վերանորոգման և պահպանման**</u> նպատակով հաշվետու տարում կապիտալ ներդրումները կատարվել են 2,523.0 մլն ՀՀ դրամի չափով:

<u>**Առողջապահության ոլորտում**</u> կատարված կապիտալ ներդրումների ծավալը կազմել է 260.3 մլն ՀՀ դրամ:

Առողջապահության ոլորտում ներդրումներ են կատարվել նաև արտաբյուջետային միջոցների՝ հիմնականում «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից կատարված մուտքերի հաշվին՝ 517.6 մլն ՀՀ դրամ: Այս ծրագրի շրջանակում ավարտված են Մարտակերտի շրջանի պոլիկլինիկայի նոր շենքի կառուցման աշխատանքները: Ընթացքի մեջ են Բերձոր քաղաքի շրջանային հիվանդանոցի նոր շենքի կառուցման աշխատանքերը:

Առանձնակի ուշադրություն է դարձվել **նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման** որակի բարձրացմանը և կատարելագործմանը՝ այն համապատասխանեցնելով նախագծման ժամանակակից պահանջներին, որի կատարման համար հատկացվել է 216.3 մլն ՀՀ դրամ:

Ոռոգման և ջրամատակարարման համակարգերի զարգացման նպատակով 2014 թվականին ներդրվել է 1,759.4 մլն ՀՀ դրամ:

Ջեռուցման համակարգերի արդիականացման նպատակով 2014 թվականին ներդրվել է 82.8 մլն ՀՀ դրամ:

Կոմունալ շինարարության նպատակով 2014 թվականին ներդրվել է 800.7 մլն ՀՀ դրամ:

<u>*Զբոսաշրջություն*</u>

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության ամենաշարժուն և շահութաբեր ոլորտներից է, որի զարգացման արագ տեմպերը առավել մեծ հնարավորություններ և նպաստավոր պայմաններ են ստեղծում տվյալ երկրի տնտեսության առանձին ոլորտների, մասնավորապես, զբոսաշրջային ինդուստրիայի ձևավորման ու զարգացման համար: Այն

յուրահատուկ տեղ է զբաղեցնում ոչ միայն առանձին երկրների տնտեսություններում, այլև միջազգային տնտեսական հարաբերություններում:

Զբոսաշրջությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման գերակա ոլորտներից է:

2014 թվականին մարքեթինգային քաղաքականության շրջանակներում իրականացվել են մի շարք ծրագրային միջոցառումներ: Արցախի մասին նկարահանվել են 15 րոպե տևողությամբ երեք ֆիլմեր՝ «Հունոտի կիրճ» պետական բնապատմական արգելոց, «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոց, «Նիկոլ Դումանի տուն-թանգարան և ազգագրական թաղամաս» (հայերեն, ռուսերեն և անգլերեն):

Զբոսաշրջային ներուժի քարոզչության նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է չորս հեղինակավոր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում՝ Մադրիդում, Փարիզում, Ռիմինիում և Լոնդոնում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների միջև համագործակցության շնորհիվ 2014 թվականին կանխվել է Ադրբեջանի կողմից Միացյալ Ազգերի Կազմակերպության Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության գործադիր մարմնի 99-րդ նիստում ներկայացված «Օկուպացված տարածքներում զբոսաշրջության քարոզչությունը կանխելու մասին» հակահայկական բանաձևը, որը կոչված էր ձախողելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջային ներուժի քարոզչությունը միջազգային հարթակներում:

«Կարաբախինֆորմեյշն» (KarabakhInformation) չորս տեղեկատվական կենտրոնները 2014 թվականի ընթացքում սպասարկել են հազարավոր զբոսաշրջիկների: 2014 թվականից գործում է նաև Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղադրված «Կարաբախինֆորմեյշն» (KarabakhInformation) նոր տեղեկատվական կրպակը:

2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Կարաբախ թրավլ» (Karabakh.travel) զբոսաշրջային պաշտոնական կայքէջը ենթարկվել է փոփոխությունների: Կատարվել է կայքէջի դիզայնի վերամշակում և ադապտացում սմարթֆոնի և պլանշետի համար: Հայերեն, անգլերեն և ռուսերեն տարբերակներին ավելացվել են կայքէջի արաբերենը և գերմաներենը:

Հարավային զբոսաշրջային երթուղու զարգացման ծրագրի շրջանակներում ներգնա զբոսաշրջությունը խթանելու և տեղի բնակչությանը լրացուցիչ եկամուտներ ապահովելու, ինչպես նաև տարածաշրջանում գինեգործությունը խթանելու նպատակով 2014 թվականի հոկտեմբերի 18-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տող

գյուղում կազմակերպվել է Արցախյան գինու առաջին փառատոնը: 2014 թվականին արձանագրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելած միջազգային զբոսաշրջիկների թվաքանակի 12 տոկոս նվազում:

Մյուս կողմից, մոնիթորինգի արդյունքում ի հայտ է եկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում զբոսաշրջիկների գիշերակացի տևողության և Հայաստանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկների թվաքանակի աճ: Համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության տվյալների՝ սոցիալական փաթեթների շրջանակներում իրենց հանգիստը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կազմակերպելու նպատակով՝ տուրօպերատորների կողմից կնքվել է 500 պայմանագիր՝ 2013 թվականին կնքված 72 պայմանագրի դիմաց :

2014 թվականին միջազգային զբոսաշրջիկները երկրում ծախսել են շուրջ 6.4 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Պատմամշակութային հուշարձանների պահպանման և վերականգնման ոլորտ

Պատմամշակութային հուշարձանների պահպանության, ուսումնասիրման ու օգտագործման բնագավառը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմության և մշակույթի կարևորագույն ու առանձնահատուկ ոլորտներից է: Այն զգալի դեր ու նշանակություն ունի անցյալի մշակութային ժառանգության հետագա պահպանման, մասնագիտական համակողմանի ուսումնասիրման և գալիք սերնդին անխաթար փոխանցման համար:

Պատմամշակութային ժառանգության պահպանության նկատմամբ պետական քաղաքականության հիմքում ընկած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող մշակութային արժեքների պահպանությունն ու վերականգնումը, հաշվառումը, գիտական ուսումնասիրությունների իրականացումը, հուշարձանների օգտագործման համալիր ծրագրերի մշակումն ու իրագործումը, ինչպես նաև՝ հանրահռչակումը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մեծածավալ պեղման աշխատանքներ են իրականացվել Տիգրանակերտում, Ազոխի քարանձավում: Ելնելով անհրաժեշտությունից, իրականացվել են նաև պեղման – ուսումնասիրման հրատապ աշխատանքներ (Մարտակերտի շրջանի Վաղուհասի Մարիամքաղաք վանքի տարածքում, Քաշաթաղի շրջանի Արծվաշենի համայնքի տարածքում ի հայտ բերված կարասի, Տողի

մելիքական ապարանքի քանդված շինության մաքրման և Ստեփանակերտում պատահականորեն բացված կարասի պեղումները): Միջգերատեսչական հնագիտական հանձնաժողովի կողմից քննարկվել և ընդունվել են 2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացրած պեղման-ուսումնասիրման աշխատանքների հաշվետվությունները:

2014 թվականի ընթացքում ընթացքավորվել են նաև հուշարձանների հաշվառման-վկայագրման և պահպանության գոտիների կազմման աշխատանքները: Ընդ որում, կարևորվել են Քաշաթաղի շրջանում իրականացվելիք աշխատանքները:

2014 թվականին ուսումնասիրվել և վկայագրվել է թվով 224 հուշարձան՝ վկայագրված հուշարձանների ընդհանուր թվաքանակը հասցնելով 4,698-ի:

2014 թվականին կազմվել է 66 հուշարձանի պահպանական գոտի՝պահպանական գոտիների ընդհանուր թվաքանակը հասցնելով 828-ի:

Կազմակերպվել ու անց են կացվել հուշարձանների վերականգնման էսքիզային նախագծերի և ընդհանրապես հուշարձանների պահպանության հետ կապված մի շարք գիտխորհուրդներ: Քննարկվել են Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի Հակոբավանքի վերականգնման, «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոցի աղբյուր-իջևանատան վերականգնման ու բարեկարգման, Հադրութի շրջանի «Տողի Մելիքական ապարանք» պետական պատմամշակութային արգելոցի վերականգնման և տարածքի բարեկարգման, Մարտակերտի շրջանի Պողոսագոմերի Սուրբ Աստվածածին-Ամենափրկիչ եկեղեցու, Հադրութի շրջանի «Կատարովանքի» նախագծային, Մարտունու շրջանի Մուշկապատի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնման էսքիզային, Ամարասի վանքի վերականգնման, նույն վանքին կից դամբարանի և Տիգրանակերտի նորահայտ դամբարանի ծածկերի տեղադրման, Կարկառի հնագիտական պեղավայրի վերականգնման, նույն հնավայրի «Կրակարանի» վերակազմության, «Հունոտի կիրճ» պետական բնապատմական արգելոցի «Ջրդուզ» (Կատարուտ) տեղավայրի հարմարեցման, ինչպես նաև՝ Դադիվանքի որմնանկարների ամրացման-վերականգնման աշխատանքների նախագծերը:

Հուշարձանների հանրահռչակման աշխատանքների շրջանակներում 2014 թվականին իրականացվել են Առաքել Կոստանդյանցի «Պատմություն Արցախի» ձեռագրի գրաբարից աշխարհաբար թարգմանության աշխատանքները: Քարոզչության ասպարեզում աշխատանքներ են տարվել ռադիոյով, հեռուստատեսությամբ և «Ազատ Արցախ» թերթում: Տարվա ընթացքում կազմվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի հուշարձանների լրամշակված ցանկը:

Ընթացիկ տարում բարձրացվել է վերահսկողությունը պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության բնագավառի նկատմամբ:

Հուշարձանների վերականգնման ոլորտում իրականացվել և ավարտին են հասցվել Տող գյուղի պալատական համալիրի և շրջակայքի վերականգնման ու բարեկարգման աշխատանքները: 2014 թվականին սկսվեցին «Տողի մելիքական ապարանք» պետական պատմամշակութային արգելոցի պարսպապատման աշխատանքները: Պարսպապատման աշխատանքները ամբողջությամբ և հատկացված ժամանակահատվածում հասցվեցին ավարտին:

2015 թվականին կշարունակվեն «Տողի մելիքական ապարանք» պետական պատմամշակութային արգելոցի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների վերականգնման և վերանորոգման աշխատանքները:

Վերականգնման աշխատանքները շարունակվեցին և ավարտին հասցվեցին Փիրումաշեն եկեղեցում: Եկեղեցին ամբողջությամբ վերականգնվեց նախատեսված ժամանակահատվածում:

2014 թվականին շարունակվեցին «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոցի և շրջակայքի վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքները:

Աշխատանքներ սկսվեցին Տիգրանակերտ հնավայրի տարածքում հնագիտական բազայի կառուցման ուղղությամբ: Աշխատանքները լրիվությամբ ավարտված են:

2015 թվականին կշարունակվեն Տիգրանակերտ հնավայրի ցանկապատման և տարածքի բարեկարգման աշխատանքները:

<u>Էներգետիկա</u>

2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվել է 224.5 մլն կՎտ/Ժ էլեկտրաէներգիա, որն 2013 թվականի համեմատ աճել է 31.6 մլն կՎտ/ժ-ով, կամ 16.4 տոկոսով: «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունում արտադրվել է 166.4 մլն կՎտ/ժ, որն աճել է 19.8 մլն կՎտ/ժ-ով, կամ 16.7տոկոսով, դրանից 103.7 մլն կՎտ/ժ-ը արտադրվել է «Սարսանգ ՀԷԿ»-ում: «Սյունիք» փոքր հիդրոէլեկտրակայանների կասկադում արտադրվել է 58.0 մլն կՎտժ էլեկտրաէներգիա, որն աճել է 7.8 մլն կՎտ/ժ-ով, կամ 15.5 տոկոսով:

Հաշվետու ժամանակաշրջանում հիմնականում ավարտվել են 5.04 ՄՎտ դրվածքային հզորությամբ 17.0 մլն կՎտ/ժ տարեկան արտադրանքի ծավալով «Թրղե 3» փոքր

հիդրոէլեկտրակայանի շինարարական աշխատանքները, ներկայումս կատարվում է 35/10 կՎ էլեկտրաենթակայանի մոնտաժում, որը կավարտվի 2015 թվականին:

Էլեկտրաֆիկացում

Էլեկտրաէներգիայի սպառումը կազմել է 288.2 մլն կՎտժ, որն աճել է 19.2 մլն կՎտ/ժ-ով, կամ 7.1 տոկոսով: Դրանից «Հայաստանի էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունից գնվել է 63.7 մլն կՎտժ (2013 թվականին՝ 76.3 տոկոս), կամ ընդանուր քանակից՝ 22.1 տոկոսը (2013 թվականին՝ 28.3 տոկոս), «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությունից և Սյունիքի հիդրոէլեկտրակայաններից գնված էլեկտրաէներգիան՝ 224.45 մլն կՎտ/ժ, կամ 77.9 տոկոսը (2013 թվականին 71.7 տոկոս): Իրացված էլեկտրաէներգիան կազմել է 241.5 մլն կՎտ/ժ, ընդանուր տեխնոլոգիական կորուստները 110/35/10/0,4 կՎ ցանցերում՝ 45.3 մլն կՎտ/ժ (15.7 տոկոս), որն աճել է 0.5 տոկոսով, դրանից 110/35 կՎ ցանցերում՝ 16.3 մլն կՎտ/ժ (5.4 տոկոս), բաշխիչ ցանցերում՝ 29.0 մլն կՎտ/ժ (10.7 տոկոս):

2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էլեկտրաէներգետիկայի համակարգում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- էլեկտրաֆիկացվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Հակ, Լեռնահովիտ և Սպիտակաջուր բնակավայրերը, ավարտին են մոտենում Շրվական գյուղի էլեկտրաֆիկացման աշխատանքները.
- կառուցվել և վերակառուցվել են՝ 26 միավոր 10/0.4 կՎ էլեկտրական ենթակայաններ, 29.8 կմ 10 կՎ օդային գծեր, 26.7 կմ 0.4 կՎ օդային գծեր, ավարտվել են Ստեփանակերտ քաղաքի «Հայկավան» 110/35/10 կՎ էլեկտրական ենթակայանի շինմոտաժային աշխատանքները, «Հաթերք» և «Աղավնո» 110 կՎ էլեկտրական ենթակայանների վրա իրականացվել են կառուցման և վերակառուցման աշխատանքներ.
- սկսվել են Սոտք-Հաթերք-Կաշեն 110 կՎ օդային գծի շինարարական աշխատանքները:

Գազաֆիկացում

2014 թվականին հանրապետություն է ներմուծվել 43.6 մլն մ³ բնական գազ, որը 2013 թվականի համեմատությամբ աճել է 5.7 տոկոսով: Բնական գազի իրացումը կազմել է 41.7 մլն մ³, ինչը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 5.6 տոկոսով:

Չափիչ սարքերի լաբորատորիայում ստուգաչափվել և վերանորոգվել են 1057 կենցաղային և 41 արդյունաբերական նշանակությամբ գազահաշվիչներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գազամատակարարման համակարգում գազաֆիկացման և շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով կատարվել են ընդամենը 204.5 մլն ՀՀ դրամի ներդրումներ: Մասնավորապես՝

- գազաֆիկացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Սարուշեն գյուղը.
- կառուցվել են 28 միավոր գազակարգավորման կետեր՝ 14.4 կմ միջին և 12.4 կմ ցածր ճնշման գազատարեր:

Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրային համակարգերի բնագավառի գործունեության հիմքում ընկած են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրի ազգային ծրագրի» և «Ջրի ազգային քաղաքականության մասին» օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին ուղղված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղվածությունները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 228 համայնքներից թվով 59 համայնքում իրականացվում է կենտրոնացված ջրամատակարարում:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում ջրային համակարգերի ոլորտում տարվող աշխատանքների արդյունքում բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը և ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է համակարգի հուսալի ու անվտանգ շահագործումը և ջրամատակարարման շարունակական ավելացումը:

Վերականգնվել և մաքրվել են քահրիզների թվով 33 հորեր: Ջրընդունիչ հանգույցներում և օրվա կարգավորող ջրավազաններում իրականացվել են սանիտարական գոտիների վերանորոգման և ցանկապատման աշխատանքներ, առանձնակի ուշադրություն է դարձվել մատակարարվող խմելու ջրի ախտահանմանը:

Ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանականերում իրականացվել են ջրանցքների ընթացիկ նորոգման և վերականգնման աշխատանքներ:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների 200 և ավելի բնակչություն ունեցող համայնքների խմելու ջրի մատակարարման համակարգերի զարգացման

ծրագրի» շրջանակներում 2014 թվականին շինարարական աշխատանքներ են իրականացվել 16 համայնքներում:

2014 թվականին «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերության կողմից շահագործման են ընդունվել Նորագյուղ, Նախիջևանիկ, Վարդաձոր, Թաղավարդ, Մաղաթաշեն, Կաղարծի, Սպիտակաշեն, Քերթ, Մաճկալաշեն, Հերհեր, Շեխեր, Ակնաղբյուր և Գետավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգեր:

Արտեզյան հորերի շահագործումը կենտրոնացված դարձնելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 764-Ա որոշմամբ հիմնադրվել է «Արցախհիդրոսերվիս» փակ բաժնետիրական ընկերությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության 88 համայնքներում իրականացվել են տեսչական ուսումնասիրություններ, որոնց արդյունքներով երևան է հանվել 6 վարչական իրավախախտում և կազմվել են վարչական վարույթներ:

<u>Տրանսպորտային ենթակառուցվածքներ</u>

2014 թվականին տրանսպորտի ոլորտի գերակա խնդիրներն են հանդիսացել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների իրականցման ապահովումը, ուղևորների սպասարկման որակի բարձրացումը:

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումները հասանելի են 225 բնակավայրում կամ բնակչության 83.6 տոկոսին, իսկ ոլորտը սպասարկում են 13 կազմակերպություններ (անհատ ձեռնարկատերեր):

2014 թվականին կազմակերպվել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 4 նիստ, որի արդյունքում 5 միավոր ավտոբուս փոխարինվել են ավելի բարձր տեխնիկական ցուցանիշներ ունեցող ավտոբուսներով, իսկ 4–ը համալրել է փոխադրող կազմակերպությունների շարժակազմը:

2014 թվականի կազմակերպվել են ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման և

մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության տեսակների լիցենզավորող հանձնաժողովի թվով 35 նիստ, որոնց արդյունքում հատկացվել են 87 լիցենզիաներ:

Լիցենզիայի տրամադրման, տարեկան հերթական պետական տուրքերի, ինչպես նաև ներդիրների կրկնօրինակների տրամադրման համար 2014 թվականին պետական բյուջե է գանձվել 8,124.5 հազար ՀՀ դրամ (2013 թվականին՝ 8,381.6 հազար ՀՀ դրամ):

2014 թվականին մշակվել և Ազգային ժողովի կողմից ընդունվել է օրենսդրական փաթեթ, որի արդյունքում ֆիզիկական անձանց իրավունք է տրվել իրականացնել մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ՝ առանց ավելորդ ծախսերի և փաստաթղթերի ներկայացման:

Կատարվել են համապատասխան աշխատանքներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջշրջանային և ներշրջանային երթուղիներն սպասարկող կազմակերպությունների կողմից ուղետոմսի գործող արժեքին չհամապատասխանող երթուղիներում կրած վնասների չափերի հաշվարկման ուղղությամբ:

Ավիացիա

2014 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքներ՝ ուղղված Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկմանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության միջև օդային հաղորդակցության ստեղծմանը:

Աշխատանքները հիմնականում ուղղված էին օդանավակայանի հագեցվածության մակարդակի բարձրացմանը, առկա միջոցների անխափան աշխատանքի ապահովմանը, վազքուղու պիտանի վիճակում պահպանմանը և նավիգացիոն համակարգերի կատարելագործմանը: Հաշվի առնելով այն, որ օդանավակայանը դեռևս լիարժեք չի օգտագործվում՝ մեծ ուշադրություն էր դարձվում սպասարկող անձնակազմի պարբերաբար վերապատրաստմանը և Զվարթնոց օդանավակայանում փորձի փոխանակմանը:

Միաժամանակ հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել հանրապետությունում փոքր ավիացիայի կայացման և տնտեսության մի շարք ճյուղերում փոքր ավիացիայի ներգրավման ուղղությամբ: Մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտում թունաքիմիկատների սրսկման փորձնական աշխատանքներ են իրականացվել շուրջ 20 հեկտար հողատարածքում, արդյունքները բավարար են:

Մշակվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ավիացիոն ուսումնական հաստատություններին քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների սահմանած պահանջներին համապատասխանության վկայականների տրման կարգը», ինչպես նաև «Ստեփանակերտի օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության ուսումնական կենտրոնին տրվել է վկայական՝ վերը նշված կարգի համաձայն:

«Ստեփանակերտի օդանավակայան» փակ բաժնետիրական ընկերության ուսումնական կենտրոնում կազմակերպվել են դասընթացներ՝ սիրողական օդաչուների ուսուցման նպատակով:

Ձեռք են բերվել հոսանքի անխափան սնուցման սարքեր և հանրապետության տարբեր բարձունքներում տեղադրված P3D լոկացիոն համակարգը համալրվել է ռեզերվային սնուցման սարքերով:

Նշված աշխատանքների շրջանակներում կազմակերպվել է «Ստեփանակերտի օդանավակայան» և «ԱՐՑԱՏՍ» փակ բաժնետիրական ընկերությունների բոլոր ծառայությունների գործունեության ստուգում, դրանց աշխատանքը կանոնակարգող հրահանգների, ձեռնարկների և ընթացակարգերի ստուգում և լրամշակում:

Հեռահաղորդակցություն

«Արցախկապ» փակ բաժնետիրական ընկերությունը մատուցում է անալոգային ու թվային հեռուստահեռարձակում և ռադիոհեռարձակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքում: Ներկա դրությամբ վճարովի բաժանորդների թիվը կազմում է 6477 բաժանորդ: Անվճար բաժանորդների (սոցիալապես անապահով ընտանիքներ) թիվը կազմում է 749 բաժանորդ:

Բովուրխանի հիմնական կայանում նախորոք ձեռք բերված սարքավորումներով ձևավորվել է «DVB-T2 մուլտիպլեքս» համակարգը, որը հնարավորություն է տալիս մեկ կապուղով պետպատվերի շրջանակներում հեռահաղորդել 10 հեռուստաալիք:

2014 թվականին «Արցախկապ» փակ բաժնետիրական ընկերության հիմնական 10 կայաններից 6-ում տեղադրվել են «DVB-T» ձևաչափի վերահաղորդիչ կայաններ: «DVB-T» վերահաղորդիչ կայանների տեղադրման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ռադիոծածկույթից դուրս գտնվող և սահմանամերձ համայնքները սոցիալական փաթեթի հեռուստածրագրերով ապահովելու նպատակով՝ հաշվետու տարում շարունակվել են «DVB-S» ձևաչափի վերահաղորդիչ կայանների տեղադրումը:

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում տեղադրվել է թվով 55 «DVB-S» ձևաչափի վերահաղորդիչ կայաններ, որը հնարավորություն է ընձեռնել հանրապետության հեռուստառադիոծածկույթի հասանելիությունը ավելացնել մինչև 93.6 տոկոսի:

Փոստային կապ

Փոստային կապը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվում է «Արցախփոստ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով:

2014 թվականին լուրջ ուշադրություն է դարձվել փոստային վճարման պետական նշանների՝ նամականիշերի թողարկման ավելացմանն ու տեսականու հարստացմանը: 2014 թվականին թողարկվել է 12 անուն-նամականիշ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտադրական ենթակառուցվածքների նախարարությունների միջև ստորագրված համաձայնագրի՝ յուրաքանչյուր տարի պետք է տպագրվի համատեղ նամականիշ:

Համաձայնագրի շրջանակներում 2014 թվականի դեկտեմբեր ամսում «Հայփոստ» և «Արցախփոստ» փակ բաժնետիրական ընկերությունները տպագրել են առաջին համատեղ նամականիշը:

Հեռախոսակապ

2014 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 256 բնակավայրերում գործում է «2G», որից 13 -ում՝ «3G» կապ: Համաձայն կազմված նախագծերի իրականացվել են թվով 72 գյուղերում «Wi-Fi» սարքավորումների տեղադրումներ: 2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բջջային կապի բաժանորդների քանակն ավելացել է 7479-ով կամ 8.6 տոկոսով:

2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հեռախոսակապի և ինտերնետ հասանելիության ծառայության բնութագիրը հետևյալն է՝ 2.5 թողունակությունը հասցվել է 2.7 Գբ/վ-ի, համացանցի ծավալը 2 Գբ-ից ավելացվել է մինչև 10 Գբ: 2014 թվականի ընթացքում Ստեփանակերտում գրանցված օպտիկամանրաթելային ցանցից օգտվող ինտերնետ ծառայության բաժանորդների ընդհանուր թիվն ավելացել է 924-ով կամ 19.3 տոկոսով:

Բնապահպանություն և բնօգտագործում

Բնապահպանության և բնօգտագործման ոլորտում 2014 թվականին իրականացվող քաղաքականությունն ուղղված էր շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի վրա վնասակար ներգործությունների կանխարգելմանը կամ նվազեցմանը, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործմանն ու վերականգնմանը:

Բնապահպանության և բնօգտագործման բնագավառում առկա խնդիրների լուծման և բնագավառի պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել են համապատասխան միջոցառումներ՝ ուղղված.

- ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործմանը.

-տնտեսական ծրագրերի գծով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական համակարգի ձևավորմանը.

- բնության և շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ վերահսկողության առավել բարձր չափանիշների սահմանմանը.

-բնական ռեսուրսների օգտագործման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը.

- անտառային կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործման անհրաժեշտությամբ պայմանավորված անտառային էկոհամակարգերի բնապահպանական միջոցառումների իրականացմանը:

Իրականացվել են անտառների պահպանությանը, պաշտպանությանը, վերարտադրմանը և անտառօգտագործմանն ուղղված մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ բնական աճի աջակցման, անտառային ուսումնասիրության, բնափայտի մթերման հատատեղերի հատկացման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է՝

- գործափայտի մթերում՝ 9,100.0 մ^3,

- վառելափայտի մթերում՝ 152,100.0 դարսված մ^3,

- անտառային ֆոնդի բնական աճի աջակցում՝ 100 հա,

- հաճարենու տնկարկների խնամք՝ 15 հա,

- հաճարենու անտառատունկ 1.2 հա,

- անտառային ուսումնասիրություն՝ 2,200.0 հա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ցուցակագրված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1053-Ն որոշմամբ հաստատված 91 գիտական, բնապատմական և գեղագիտական արժեք

ներկայացնող բնության հուշարձաններից կազմվել և հաստատվել են 7 բնության հուշարձանների անձնագրեր:

Իրականացվել են գիշատիչների գլխաքանակի կարգավորման կենսատեխնիկական միջոցառումներ:

Ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործման, ինչպես նաև մասնավոր ներդրումների աճի ապահովման նպատակով իրականացվել են միջոցառումներ՝ ուղղված.

- օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզմանն ու գնահատմանը,
- օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների ֆոնդի ձևավորմանը,
- օգտակար հանածոների հաշվառման մեխանիզմների կատարելագործմանը,
- մետաղական օգտակար հանածոների հարկման մեխանիզմների բարելավմանը:

2014 թվականին ուսումնասիրվել և տրամադրվել են 1 հանքարդյունահանման և 4 երկրաբանական ուսումնասիրության թույլտվություններ, դադարեցվել են 9 հանքարդյունահանման և ուսումնասիրության թույլտվություններ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության բնագավառում բնապահպանական փորձաքննության ու ուսումնասիրության են ենթարկվել 49 ծրագրեր և տրամադրվել 49 փորձաքննական եզրակացություն ու թույլտվություն:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում ուսումնասիրվել է 38 ջրառի օբյեկտ և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել են ջրօգտագործման թույլտվություններ, երկարաձգվել են 24 ջրօգտագործման թույլտվությունների ժամկետներ:

Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում՝ որսորդներին և ձկնորսներին, համապատասխան փաստաթղթերի արժանահավատությունը ստուգելուց և ընդունելուց հետո, տրամադրվել են 217 թույլտվություններ, այդ թվում՝ 205-ը սիրողական որսի, իսկ 12-ը՝ թառփով ձկնորսություն իրականացնելու համար:

Ջրօգտագործման և բնապահպանական պետական փորձաքննության բնագավառում ստուգման է ենթարկվել 13 կազմակերպություն: Արձանագրվել է 2 իրավախախտում:

Կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում հայտնաբերվել և արձանագրվել է 58 իրավախախտում:

Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացված 8 ստուգումների արդյունքում իրավախախտում չի հայտնաբերվել:

«Բնապահպանական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ և 27-րդ հոդվածների պահանջների համաձայն,

բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված 40 ստուգումների և ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել ու օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել են 79 տարբեր տեսակի իրավախախտումներ:

Սոցիալական ապահովություն և ժողովրդագրություն

2014 թվականին իրականացված սոցիալական քաղաքականության հիմնական նպատակներն էին ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, կենսաթոշակային և զբաղվածության համակարգերի կատարելագործումը, տարեցների, հաշմանդամների, զոհված զինծառայողների ընտանիքների, բազմազավակ ընտանիքների ու երեխաների հիմնահարցերի լուծումը:

Ժողովրդագրական քաղաքականություն

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման համատեքստում 2014 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- շարունակվել է «Նորաստեղծ ընտանիքներին ամուսնության միանվագ նպաստի տրամադրում» ծրագրի շրջանակներում տրվող նպաստի հատկացումը ամուսիններից յուրաքանչյուրին՝ 150.0 հազ. ՀՀ դրամի չափով: 2493 նոր ամուսնացած անձանց (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակում ծառայող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող պայմանագրային զինծառայողների նորաստեղծ 43 ընտանիքներ) տրամադրվել է ամուսնության նպաստ: Ծրագրի ընդհանուր ծախսը 2014 թվականին կազմել է 374.0 մլն ՀՀ դրամ.

- ծնելիության և բազմազավակության խթանման ծրագրի շրջանակներում շարունակվել է երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստների տրամադրումն ու 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի անվամբ նպատակային ժամկետային ավանդների բացումը: Հաշվետու ժամանակաշրջանում 2566 երեխայի ծննդյան կապակցությամբ հատկացվել է 684.9 մլն ՀՀ դրամի չափով ծննդյան միանվագ նպաստ, ինչպես նաև 407.4 մլն ՀՀ դրամի չափով բացվել են 706 ժամկետային ավանդներ: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ծնելիության խթանում» ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է 1,092.3 մլն ՀՀ դրամ.

- 1786 չաշխատող կանանց տրամադրվել է հղիության և ծննդաբերության նպաստ՝ 2014 թվականի հունվարի 1-ից յուրաքանչյուրին 207.0 հազ. ՀՀ դրամ, հուլիսի 1-ից՝ 230.0 հազ. ՀՀ դրամ:

- շարունակվել են 6 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների համար նոր բնակելի տների կառուցման աշխատանքները, որոնք իրականացվում են կապիտալ ներդրումների ծրագրով: 2014 թվականին հաշվառվել են 51 ընտանիքներ:

Ընտանիքի և երեխաների հիմնահարցեր

Պետական նպաստների ծրագրով 2014 թվականին ծախսվել է 2,610.2 մլն ՀՀ դրամ (2013 թվականին՝ 2,637.0 մլն ՀՀ դրամ), իսկ նպաստառուների թվաքանակը կազմել է 18592 մարդ:

2014 թվականի մայիսի 1-ից պետական նպաստ է նշանակվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում ծառայություն անցնող՝ մինչև 2 տարեկան երեխա ունեցողներին, ովքեր չունեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մշտական հաշվառում՝ ամսական 15,000 ՀՀ դրամի չափով:

Իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած 48 երեխաների կենտրոնացված հաշվառում:

2014 թվականին առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 3 անձանց Ստեփանակերտ քաղաքում հատկացվել են մեկ սենյականոց բնակարաններ, և իրականացվել է այդ բնակարանների կահավորումը՝ 6.3 մլն ՀՀ դրամի սահմաններում:

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառվել են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 11 անձինք, որոնց պետք է հատկացվեն բնակելի տներ:

Երեխաների խնամքի և պաշտապանության երկու գիշերօթիկ հաստատություններում 2014 թվականի ընթացքում խնամք են ստացել առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների 4 տասնյակից ավելի երեխաներ, ինչի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից ծախսվել է 81.9 մլն ՀՀ դրամ:

2014 թվականին գիշերօթիկ հաստատություններում խնամվող, սովորող 41 երեխաների հատկացվել են, ըստ 7-12 և 13-18 տարիքային խմբերի, համապատասխանաբար՝ 2,000 և 3,000 ՀՀ դրամի չափով գրպանի մանր ծախսեր: Ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է 1,244.0 հազ. ՀՀ դրամ:

Սեպտեմբերի 1-ի՝ գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական

պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների նպաստառու 145 երեխաների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվել է 30.0 հազ. ՀՀ դրամի չափով միանվագ դրամական օգնություն: Ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է շուրջ 4.3 մլն ՀՀ դրամ:

Կենսաթոշակային ապահովություն և սոցիալական ապահովագրություն

Կենսաթոշակային ապահովության բնագավառում գերակա ուղղություններն են՝ բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը, կենսաթոշակների և սոցիալական այլ հատուցումների չափերի աճի ապահովումը:

Ընդհանուր առմամբ կենսաթոշակների, պատվովճարների, ամենամսյա դրամական օգնությունների և պարգևավճարների վճարման նպատակով պետական բյուջեից ծախսվել է 11,065.6 մլն ՀՀ դրամ:

«Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններով 2014 թվականի հունվարի 1-ից ներդրվել են աշխատանքային կենսաթոշակների հաշվարկման նոր բանաձևեր, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի տարբերակված չափեր, ինչպես նաև՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկելու նոր կարգ:

Միաժամանակ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից ընդունված համապատասխան որոշման համաձայն՝ 2014 թվականի հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 14,000 ՀՀ դրամ, աշխատանքային ստաժի 1 տարվա արժեքը՝ առաջին 10 տարվա համար՝ 700 ՀՀ դրամ, իսկ 10 տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար՝ 450 ՀՀ դրամ:

Արդյունքում՝ միջին տարիքային կենսաթոշակը հանրապետությունում կազմել է 38,277 ՀՀ դրամ, միջին սոցիալական կենսաթոշակը՝ 17,998 ՀՀ դրամ:

Բացի վերը նշվածից՝ 2014 թվականի հուլիսի 1-ից փոփոխություններ են կատարվել նաև «Պետական կենսաթոշակների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի՝ զինվորական կենսաթոշակների հաշվարկման բանաձևերը սահմանող հոդվածներում՝ ամրագրելով կենսաթոշակների չափերի հաշվարկման նոր մոտեցումներ, ինչը պայմանավորված էր 2014 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության նոր համակարգով: Ըստ այդմ՝ զինվորական կենսաթոշակները նույնպես ենթարկվել են վերահաշվարկի, և արդյունքում միջին կենսաթոշակի չափը կազմել է 81,332 ՀՀ դրամ:

Աշխատանք և զբաղվածություն

2014 թվականի գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց թիվը կազմել է 1,534 մարդ` նախորդ տարվա համեմատ նվազելով 40.2 տոկոսով:

Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային պետական մարմիններ դիմած քաղաքացիներից 2014 թվականին աշխատանքի է տեղավորվել 139 գործազուրկ:

Պետական բյուջեի միջոցներով 2014 թվականին 34 գործազուրկների համար կազմակերպվել են մասնագիտական ուսուցման դասընթացներ: Այս ծրագրին ուղղվել է 4.2 մլն ՀՀ դրամ:

Շարունակվել է 2009 թվականից մեկնարկած մասնագետներին խրախուսման և սոցաջակցության ծրագիրը, որի շրջանակներում այլ վայր աշխատանքի ուղեգրվող բժիշկներին տրամադրվել է ֆինանսական աջակցություն: 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ ծրագրում ընդգրկված են 60 բժիշկներ:

2014 թվականին իրականացվել է 21 ստուգում և 155 խորհրդատվություն ու մեթոդական օգնություն: Աշխատողների խախտված իրավունքների վերականգնման նպատակով իրականացված տեսչական ստուգումների արդյունքում 2014 թվականին վերականգնվել է 202.0 հազ. ՀՀ դրամի չվճարված աշխատավարձ, 352.3 հազ. ՀՀ դրամի վերջնահաշվարկ, 58.2 հազ. ՀՀ դրամի արձակման նպաստ: Արձանագրված խախտումների վերաբերյալ նշանակվել է 224.4 հազ. ՀՀ դրամի վարչական տույժ:

Սոցիալական աջակցություն

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում իրականացվող ծրագրերն ուղղված են եղել հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավմանը, հասարակությանը նրանց ինտեգրմանը, հավասար (մատչելի) պայմանների ապահովմանը, բժշկական, սոցիալական և հոգեբանական վերականգնմանն ուղղված աշխատանքներին: Մասնավորապես.

-ըստ անհրաժեշտության հաշմանդամներին տրամադրվել են պրոթեզավորման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ, թիկնասայլակներ, լսողական սարքեր, քայլակներ, հենակներ, ձեռնափայտեր: Իրականացվել են հաշմանդամների վերջույթների և աչքի պրոթեզավորումներ: Ծրագրի ընդհանուր ծախսը 2014 թվականին կազմել է 46.7 մլն ՀՀ դրամ,

-պետական բյուջեի միջոցների հաշվին կազմակերպվել է առանձին սոցիալական խմբերին պատկանող քաղաքացիների առողջարանային բուժումը, ինչպես նաև նրանց

տրամադրվել են հանգստյան տների ուղեգրեր: Այս ծրագրից օգտվել է ավելի քան 556 քաղաքացի, ծախսը կազմել է 90.4 մլն ՀՀ դրամ,

-հիշարժան օրերի կապակցությամբ միանվագ դրամական օգնություն է տրամադրվել Հայրենական մեծ և Արցախի ազատագրական պատերազմներում հաշմանդամ դարձած և զոհված զինծառայողների ընտանիքներին: Ընդ որում, ի նշանավորումն Հայրենական Մեծ պատերազմի (այսուհետ՝ ՀՄՊ) հաղթանակի 69-ամյակի, մայիսի 9-ի կապակցությամբ ՀՄՊ մասնակիցներին, հաշմանդամներին և ՀՄՊ-ում զոհվածների ընտանիքներին տրամադրվել է 50.0 հազարական ՀՀ դրամ, ՀՄՊ մասնակիցներին և հաշմանդամներին հավասարեցված անձանց՝ 25.0-հազարական ՀՀ դրամ, ԽՍՀՄ մեդալակիրներին՝ 11.0- հազարական ՀՀ դրամ: Ծրագրի ընդհանուր ծախսը 2014 թվականին կազմել է 215.6 մլն ՀՀ դրամ,

-2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին հատկացվել է միանվագ ապահովագրական վճար: Ծրագրի ընդհանուր ծախսը 2014 թվականին կազմել է 11.7 մլն ՀՀ դրամ,

- վարժական հավաքների և զինծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության ու գերեզմանների բարեկարգման համար ընդհանուր առմամբ տրամադրվել է 58.3 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում,

-շարունակվել է 2010 թվականին կյանքի կոչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ 2 և ավելի զոհ տված ընտանիքներին ամենամսյա դրամական օժանդակության տրամադրման ծրագիրը: Ծրագրի տարեկան ծախսը կազմել է 36.2 մլն ՀՀ դրամ:

«Ստեփանակերտի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2014 թվականին խնամք են ստացել 75 ծեր և հաշմանդամ քաղաքացիներ, ինչի համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից ծախսվել է 108.4 մլն ՀՀ դրամ:

Միայնակ տարեցների խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրումն 2014 թվականի հուլիսի 1-ից իրականացվել է «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» պետական ոչ կառավարչական հիմնարկի միջոցով, որը տնային պայմաններում ապահովել է 131 միայնակ ծերերի խնամք:

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշմանդամների ընդհանուր թիվը կազմել է 9,033 մարդ, որը ընդհանուր բնակչության մոտ 6 տոկոսն է:

Բարեգործական ծրագրեր

2014 թվականին հրավիրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 29 նիստ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ընդունվել է 64 որոշում:

Տարբեր պետություններից բարեգործական կարգով ընդունվել են ապրանքների 13 խմբաքանակ՝ 152.4 մլն ՀՀ դրամ արժողությամբ:

«Հումանիտար օգնության միջոցառումներ» ծրագրի ծախսը 2014 թվականին կազմել է 12.1 մլն ՀՀ դրամ:

Դրամական և նյութական օգնություն

Դիմումների քննարկման և ուսումնասիրման արդյունքում «Դրամական (նյութական) օգնություն սոցիալապես անապահով քաղաքացիներին և ընտանիքներին» ծրագրի շրջանակներում 2014 թվականին 2546 քաղաքացիների տրամադրվել է ընդհանուր առմամբ 79.3 մլն ՀՀ դրամի չափով դրամական և նյութական օգնություն:

Առողջապահություն

Բնակչության առողջության պահպանումը պետության կողմից դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներից մեկը:

2014 թվականին առողջապահության ոլորտի գործունեության քաղաքականության հիմքում դրված են եղել բնակչության առողջության պահպանման և բարելավման հստակորեն սահմանված հետևյալ հիմնական արժեքները՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում:

Իրականացվող բարեփոխումներն անդրադառնում են համակարգի կազմակերպչական ու կառուցվածքային վերափոխումներին, օրենսդրական դաշտի բարելավմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը, առողջապահության

ֆինանսական համակարգի և բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը:

Առողջապահության ոլորտում պահպանվել են պետության կողմից իրականացվող քաղաքականության ներքոհիշյալ գերակա ուղղությունները՝ մատչելի և որակյալ բժշկական օգնության ապահովումը, հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության պահպանման, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը, բժշկական օգնության որակի բարելավումը, հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ բուժօգնության և դեղերով ապահովումը, տեղեկատվական համակարգի կատարելագործումը, պետական ֆինանսական միջոցների արդյունավետ, նպատակային օգտագործումը:

Ելնելով առողջապահության ոլորտի ծրագրային գերակայություններից 2014 թվականին առողջապահական պետական նպատակային ծրագրեր են հանդիսացել.

- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման ծրագիրը,
- բնակչության առողջության առաջնային պահպանման ծրագիրը,
- մոր և մանկան առողջության պահպանման ծրագիրը,
- բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ծրագիրը,
- սոցիալական և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի ծրագիրը:

Ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում շարունակել է գերակա համարվել բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովումը: Իրականացվել են առաջնային բուժօգնության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական բնակչության կարիքներին:

Առաջնային բուժօգնության օղակի աշխատանքները լիարժեք իրականացնելու համար կազմակերպվել են բազմաթիվ այցեր տարբեր շրջաններ և գյուղեր՝ տեղում ծանոթանալով առկա խնդիրներին և հնարավորության սահմաններում տալով համապատասխան լուծումներ: Առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) բժիշկները ամիսը մեկ անգամ, իսկ նեղ մասնագետները (վիրաբույժ, ակնաբույժ, նյարդաբան, քիթ-կոկորդ-ականջաբան, սրտաբան)՝ տարեկան երկու անգամ, համաձայն տվյալ բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով հաստատված ժամանակացույցի,

այցելություններ են կատարել կցագրված գյուղական համայնքներ և տեղում կատարել բնակչության ընդունելություն:

2014 թվականին շարունակվել է առաջնային բուժօգնության օղակի դերի բարձրացումը, կանխարգելիչ ուղվածության ուժեղացումը, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության կողմից իրականացնող բուժօգնության տեսակների և դրա տեսակարար կշռի ավելացումը: Բուժհիմնարկներում բնակչության բուժօգնության և սպասարկման, ախտորոշման որակի բարձրացման նպատակով ձեռք են բերվել վերջին սերնդի համակարգչային շերտագրիչ, ստացիոնար և շարժական թվային ֆլյուորոգրաֆներ, ժամանակակից ռենտգեն-սարք, որը հնարավորություն է տալիս հեռակառավարման միջոցով կատարել բոլոր նպատակային ռենտգեն նկարահանումները, անդրադարձային տեսագրիչ (էխոսկաներ): Միաժամանակ ներդրվել են կորոնարոգրաֆիայի և ստենտավորման անցկացման ծառայություններ, որոնք բնակչությանը հնարավորություն են տալիս օգտվելու կարդիովիրաբուժական անհետաձգելի միջամտությունից: Ներդրվել են նաև օրթեզավորման և կորսետավորման ծառայություններ մանկական և մեծահասակ բնակչության համար:

«Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության պահպանում» ծրագրով իրականացվել են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում, հանրային առողջության պահպանման նպատակով փորձագիտական հետազոտությունների անցկացում, ուսումնասիրություններ, լաբորատոր և գործիքային հետազոտություններ: Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը իրականացրել է հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) կողմից սանիտարա-համաճարակաբանական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև բնակչության առողջության նկատմամբ արտաքին աշխարհի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելում: Ուշադրության կենտրոնում էր ջրամատակարարման և ջրօգտագործման անվտանգության ապահովման խնդիրը, բնակելի տարածքների սանիտարական վիճակը՝ համաձայն գործող սանիտարական նորմերի և կանոնների:

2014 թվականին շարունակվել է նաև մյուս առողջապահական պետական նպատակային ծրագրերի իրականացումը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից առողջապահական համակարգին հատկացված միջոցների արդյունավետությունը բարձրացնելու և ծախսերը վերահսկելու նպատակով ստուգումներ են կատարվել

բուժհիմնարկներում և վերջիններիս կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացվող ամսական և եռամսյակային հաշվետվությունների մասով:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականությունը ուղղված է եղել դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացմանը: Հանրապետության բնակչությանը որակյալ դեղերով ապահովումը կանոնակարգելու նպատակով 2014 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռք բերում» ծրագրով նախատեսված գումարներով ձեռք է բերվել դեղորայք, որը տրամադրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի եւ հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» N555 որոշմամբ նախատեսված անձանց: Բուժհիմնարկների բյուջեներում նույն նպատակով հատկացված գումարներով ձեռք բերված դեղերի թվաքանակը մասամբ համալրել է հիվանդների պահանջարկը: Շարունակվել է հեպատիտ «C» հիվանդների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով սոցիալապես անապահով քաղաքացիներին որոշ վիրահատությունների համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը:

Շարունակվել է բուժկետերի ապահովումը դեղանյութերով և բժշկական պարագաներով ինչպես՝ պետական բյուջեով նախատեսված գումարների, այնպես էլ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարություն հետ համագործակցող տարբեր բարեգործական կազմակերպությունների միջոցով:

2014 թվականին աշխատանքներ են տարվել բժիշկների և բուժքույրերի վերապատրաստման ուղղությամբ: Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ընդունելությանը մասնակցած դիմորդներից 17-ը ընդունվել են «Ընդհանուր բժշկության» ֆակուլտետ, պետական պատվերի շրջանակներում:

Պետական պատվերով նույն համալսարանի մագիստրատուրա են ընդունվել բակալավրիատի արցախցի 9 շրջանավարտ:

Առողջապահության համակարգը անհրաժեշտ նեղ մասնագետներով համալրելու նպատակով Երևանի պետական բժշկական համալսարանի կլինիկական օրդինատուրայում պետական պատվերի շրջանակներում ուսուցանելու նպատակով ուղեգրվել է 9 բժիշկ՝ տարբեր մասնագիտություններով:

Շարունակվել են աշխատանքները բժշկական մասնագետների հետ դիպլոմային շարունակական կրթության ուղղությամբ: Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան երկրներում վերապատրաստման դասընթացներ են անցել 60 բժիշկ: Վերապատրաստումները հիմնականում անց են կացվել Ամերիկյան հայ օգնության ֆոնդի, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առաջատար բժշկական հիմնարկներում, մասնավորապես՝ Էրեբունի բժշկական կենտրոնում:

2014 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Երևանի պետական բժշկական համալսարանի և «Էրեբունի» բժշկական քոլեջի վերապատրաստման ծրագրերի շրջանակներում քաղաք Ստեփանակերտում պետական պատվերի շրջանակներում անց է կացվել Հանրապետական բժշկական կենտրոնի 80 բուժքույրի 5-շաբաթական վերապատրաստում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության համակարգի բժշկական հիմնարկները 2014 թվականին համալրվել են 15 բժիշկներով, որոնցից 11-ը՝ Հայաստանի Հանրապետությունից տեղափոխված:

Շարունակվել է բուժքույրերի ատաժավորման և որակավորման գործընթացը, որի արդյունքներով ատաժավորում է անցել և ստացել որակավորման վկայականներ 103 բուժքույր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի «Այլ վայր ուղեգրվող բժշկին ֆինանսական աջակցության ցուցաբերում» թիվ 319-Ն որոշմամբ սահմանված կարգի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մասնագիտությամբ աշխատելու համար Հայաստանի Հանրապետությունից տեղափոխված 9 բժշկի աշխատավարձին սահմանվել է հավելավճար և տրվել է բնակվարձի փոխհատուցում: 2014 թվականին նշված որոշման համաձայն ֆինանսական աջակցություն է ստացել 54 բժիշկ:

Կրթություն և գիտություն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պետական կրթական քաղաքականությունն իրականացվում է կրթական բոլոր աստիճաններում և ապահովվում է նրանց ներդաշնակ գործունեությունը: Այդ քաղաքականության հիմքում զուգակցվում են ազգային և համաշխարհային (միջազգային) նորարարությունները, ինչն առավել բարձր որակ ապահովելու նպատակ է հետապնդում:

Կրթության ոլորտի գերակա՝ հանրակրթության ոլորտում աշխատանքներ են տարվել ուսման որակի բարձրացման ուղղությամբ և այդ նպատակով հետևողական միջոցներ են ձեռնարկվել դպրոցները ուսումնամեթոդական, մասնագիտական գրականությամբ, դասագրքերով, տեղեկատվական տեխնոլոգիաներով համալրման և հնարավորությունների օգտագործման, դպրոցաշինության և գույքով ապահովման, ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման, սովորողների գիտելիքների և կարողությունների զարգացման նպատակով առաջավոր փորձի ներդրման, առարկայական օլիմպիադաների ու տարբեր մրցույթների, ռազմահայրենասիրական և այլ բնույթի միջոցառումների իրականացման ու այլ ուղղություններով:

2014 թվականին շարունակվել է պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ և դպրոցներին կից նախադպրոցական խմբեր ստեղծելու պետական քաղաքականությունը: Երեխաներին տարրական դպրոցին նախապատրաստելու համար ապահովվել է դպրոցներին կից նախադպրոցական խմբերի գործունեությունը՝ ավելացնելով նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը: Գործել են 45 նախադպրոցական ուսումնական հաստատություն և 60 նախադպրոցական խմբեր՝ 4835 երեխաների ընդգրկմամբ:

Պետական բյուջեով 36.8 մլն ՀՀ դրամ աջակցություն է ցուցաբերվել Հայ օգնության միության «Սոսե» մանկապարտեզներին:

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցականներին տրամադրվել են դասագրքեր՝ անվճար հիմունքներով, իսկ ուսուցիչներին՝ այդ դասագրքերին համապատասխան՝ ուսուցչի ձեռնարկներ, մեթոդական և հայ դասական գրողների ծրագրային գրականություն: Դպրոցների առաջին դասարաններ ընդունված 2,329 դպրոցականներին տրամադրվել է 20 հազարական ՀՀ դրամ, որի նպատակն էր նրանց հագուստով և գրենական պիտույքներով ապահովելը:

2014 թվականին հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների համար պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին ձեռք են բերվել մարզական, խոհանոցային գույք և ֆիզիկայի սարքեր:

Կրթության բովանդակային բարեփոխումները կախված են ուսումնական հաստատությունների շենքային պայմաններից: 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների և արտաբյուջետային միջոցների հաշվին վերակառուցվել ու շահագործման են հանձնվել հինգ դպրոցական և երկու մանկապարտեզի շենքեր, իսկ 17 կրթօջախների շինարարական աշխատանքները

կշարունակվեն 2015 թվականին: Իրականացվել են դպրոցական շենքերի ընթացիկ նորոգումներ:

Սովորողների ունակությունների ու կարողությունների բացահայտման նպատակով անցկացվել են առարկայական օլիմպիադաներ, շարադրությունների ու այլ ստեղծագործությունների մրցույթներ, գեղանկարչական ցուցահանդեսներ, ռազմամարզական մրցումներ, որին նպաստում են ուսումնական հաստատություններում և 31 արտադպրոցական հիմնարկներում կազմակերպվող խմբակային պարապմունքները, որոնցում ընդգրկված են շուրջ 8500 սովորողներ:

Ուշադրության կենտրոնում են գտնվել երեխաների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքները: «Ասպետ» ռազմամարզական, Ստեփանակերտի N 5 և N10 դպրոցների, Ծմակահողի, Հայաստանի Հանրապետության ճամբարներում ընդգրկվել են 1350 դպրոցականներ, 22 դպրոցականներ՝ Հունաստանի և 2416 դպրոցականներ՝ այլ ճամբարներում:

2014 թվականին համալրվել է ուսումնական հաստատությունների համակարգչային համակարգը. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից տրամադրվել են 110 համակարգիչներ, որոնք տրվել են տարբեր դպրոցների:

2014 թվականին իրականացվել են 991 մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացներ:

Մասնագիտական կրթության ոլորտում հետևողական աշխատանքներ են տարվել արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտությունների հստակեցման, շենքային պայմանների բարելավման, ուսումնանյութական հագեցվածության համալրման, արհեստավոր և կրտսեր մասնագետների պատրաստման հիմնախնդիրների իրականացման ուղղությամբ:

Արհեստագործական կրթության գծով երկու արհեստագործական ուսումնարանների 27 խմբերում ընդգրկված են 419 սովորողներ:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում շարունակում է առաջնահերթ խնդիր դիտվել ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին: Այս կապակցությամբ շարունակվում է նորմատիվային այնպիսի ակտերի մշակման գործընթացը, որոնք միտված են նպաստելու բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում իրականացվող քաղաքականությանը, անհրաժեշտ քայլեր են արվում Բոլոնիայի գործընթացին անդամակցելու ուղղությամբ:

Գիտահետազոտական աշխատանքների որակի բարձրացման և գիտական կադրերի պատրաստման նպատակով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային

ակադեմիայի գործուն աջակցությամբ և պետական բյուջեով հատկացված միջոցների ներդրմամբ կենսաքիմիական ուղղություն ունեցող երեք լաբորատորիաներում գիտական աշխատողների և լաբորատորիայի վարիչների ներգրավմամբ իրականացվում են գիտական հետազոտություններ 6 թեմաների գծով: Արցախի գիտական կենտրոնի անմիջական ղեկավարությամբ իրականացվում են գյուղատնտեսության, շինարարության, ընդերքի հետազոտման, ինչպես նաև Արցախի բարբառի, բանահյուսության և պատմության ուսումնասիրման բնագավառներին վերաբերող գիտահետազոտական աշխատանքներ, որոնցում ընդգրկված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ու համապատասխան կառույցների գիտաշխատողները: 2014 թվականին Արցախի գիտական կենտրոնի ղեկավարությամբ իրականացվել են 7 թեմաներ, որոնցից 3-ի կատարումն ավարտվել է և հայտարարված մրցույթի արդյունքում հաստատվել են գիտական 4 նոր թեմաներ:

Մշակույթ և երիտասարդություն

2014 թվականին մշակույթի ոլորտում պետական քաղաքականությունն իրականացվել է մշակութային կրթության համակարգի կատարելագործման, մշակութային երկխոսության և համագործակցության խորացման, մշակութային ինքնության պահպանման ու վերարտադրության, թանգարանային գործի կատարելագործման, մշակութային քարոզչության ակտիվացման, ստեղծագործական ներուժի դրսևորման ու իրացման պայմանների ապահովման գերակա ուղղություններով: Ընդհանուր առմամբ, տարվա ընթացքում իրականացվել է 200-ից ավելի մշակութային միջոցառում:

Մշակութային կրթության համակարգի կատարելագործման, ոլորտի կառավարման ճկունության և արդյունավետության բարձրացման նպատակով աշխատանքներ են տարվել գեղարվեստական կրթության համակարգի իրավական դաշտի կարգավորման, միասնական չափորոշիչների մշակման, մշակույթի բնագավառի կադրային համալրման ուղղությամբ:

Իրականացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջկենտրոններում գործող երաժշտական դպրոցները՝ արվեստի դպրոցների վերակազմակերպելու գործընթացը, որի արդյունքում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների 2014-2015 թվականների օրինակելի ուսումնական պլաններով դասաժամերի օպտիմալացման արդյունքում, առանց լրացուցիչ ֆինանսական

ծախսերի, բացվել են արվեստի դպրոցների 35 բաժիններ, որից 2-ը՝ մայրաքաղաքում, 33-ը՝ շրջաններում:

Հանրապետությունում գործող ուսումնական հաստատությունները պարուսույց-մանկավարժներով համալրելու նպատակով Ստեփանակերտի պարարվեստի քոլեջում բացվել է «Պարի ուսուցում» բաժինը: Իրականացված բարեփոխումների արդյունքում հնարավորություններ են ստեղծվել մշակութային կրթության անընդհատության, շարունակականության, ամբողջականության և բնակչության լայն շրջաններին հասանելիության ապահովման համար:

Մշակութային երկխոսության և համագործակցության խորացման ուղղությամբ, 2014 թվականին Արցախում իրականացվել են մի շարք նշանակալի միջոցառումներ. աշխարհահռչակ երգչուհի Մոնսերատ Կաբալիեի համերգը՝ Ստեփանակերտում, «Հակոբ Գյուրջյան» քանդակի երրորդ միջազգային սիմպոզիումը՝ Շուշիում, Ավետ Տերտերյանի «Կրակե օղակ» օպերայի առաջնախաղը՝ Շուշիում, Մինաս Մանասյանի «Գանձասար» սիմֆոնիայի առաջնախաղը՝ Գանձասարի վանական համալիրում, Տիգրան Մանսուրյանի 75-րդ տարեդարձին նվիրված համերգը Ստեփանակերտում՝ Արաքս Մանսուրյանի և ավստրալացի երաժիշտների մասնակցությամբ:

Ապահովվել է արցախցի 4 անհատ կատարողների և 3 մշակութային կոլեկտիվների մասնակցությունը միջազգային մրցույթների ու փառատոների Հայաստանի Հանրապետությունում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Լեհաստանում: Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում կայացել է նկարիչ Սամվել Գաբրիելյանի անհատական ցուցահանդեսը, Գերմանիայում՝ «Իմ Արցախ» խորագրով գեղանկարների ցուցահանդեսը, Լիբանանում կազմակերպվել է «Արցախյան մշակույթի օրեր» միջոցառումը:

Համերգային կազմակերպությունները հանդես են եկել արտասահմանյան մի շարք երկրներում: Մասնավորապես, «Մենք ենք, մեր սարերը» համույթը համերգներով հանդես է եկել Ռուսաստանի Դաշնության 14 քաղաքներում, Իրանի Իսլամական Հանրապետությունում և Լիբանանում, Պարի պետական համույթը՝ Ռուսաստանի Դաշնության 6 քաղաքներում և Ղազախստանում, «Արցախի ձայներ» խումբը՝ Իսպանիայում, Վրաստանում, Շվեյցարիայում և Ֆրանսիայի 4 քաղաքներում: Փարիզյան համերգի հասույթը ֆոնետոնի շրջանակներում փոխանցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

Մշակութային ինքնության, ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման ուղղությամբ նոր թափ են ստացել **գիտահետազոտական աշխատանքները**:

Մասնավորապես, համագործակցություն է սկսվել «Ղուկասյան եղբայրների անվան Արցախի բարբառի և ազգագրության ուսումնասիրման կենտրոն»-ի և Արցախի ու Հայաստանի Հանրապետության բուհերի, տարբեր գիտական կենտրոնների ու հաստատությունների հետ: Աջակցություն է ցուցաբերվել Արցախի բարբառի բառարանի հրատարակմանը: Իրականացվել են բանահավաքչական և բարբառային նյութերի հավաքագրման աշխատանքներ: Հրատարակվել է ղարաբաղյան հեքիաթների գիրքը:

Աջակցություն է ցուցաբերվել Տողի և Ճարտարի արվեստի դպրոցներում, Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջում գորգագործության ուսուցողական ծրագրի իրականացմանը, Շուշիում շարունակվել է բրուտագործության զարգացման ծրագիրը, առաջին անգամ կազմակերպվել են «Արցախյան գորգարվեստ», «Տոհմածառ» մրցույթները, ինչպես նաև թոնրահացի տոնը՝ Խանցք գյուղում և «Արցախյան թթվի փառատոնը»՝ Դրախտիկում: Իրականացվել է նաև ազգագրական պարերի ուսուցման ծրագիրը:

Թանգարանային գործի զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքներում նշանակալի է Շուշիի Գ. Գաբրիելյանցի անվան երկրաբանության թանգարանի պաշտոնական բացումը: Գանձասարի վանական համալիրի տարածքում մեկնարկել են մատենադարանի ստեղծման աշխատանքները, կազմակերպվել են թանգարանային ոլորտի մասնագետների վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ, աջակցություն է ցուցաբերվել Շուշիում գործող Գորգերի թանգարանին:

Արցախի գորգերը ցուցադրվել են Ավստրիայի Վիեննա քաղաքում կայացած հայկական արձանագրությամբ գորգերի ցուցահանդեսին, ապահովվել է Արցախի ներկայացուցչի մասնակցությունը Վիեննայում կայացած միջազգային գիտաժողովին:

Ամերիայի Միացյալ Նահանգներում բնակվող բարերար Էլեոնորա Բալասանյանի նվիրատվությամբ իրականացվել են **Գրադարանների արդիականացման միջոցառումները:** Մասնավորապես, Մ. Մաշտոցի անվան հանրապետական և Մուրացանի անվան քաղաքային գրադարաններում ստեղծվել են էլեկտրոնային ընթերցասրահներ, աշխատանքներ են իրականացվել էլեկտրոնային համահավաք գրացուցակի ստեղծման ուղղությամբ, շինվերանորոգման աշխատանքներ են իրականացվել Մ. Մաշտոցի անվան հանրապետական գրադարանում:

Թատրոնների գործունեության խթանման նպատակով՝ Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի համար ժամանակավոր պայմաններ են ստեղծվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության

պալատի շենքում, աջակցություն է ցուցաբերվել Շուշիում տիկնիկային թատրոնի զարգացման նպատակով:

Ստեղծագործական ներուժի դրսևորման ու իրացման պայմանների ապահովման շրջանակներում իրականացվել է վարպետության դասերի ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության և արտերկրի մասնագետների մասնակցությամբ: Տաղանդավոր երեխաների համար կազմակերպվել են լրացուցիչ պարապմունքներ Հայաստանի Հանրապետությունում և Գերմանիայում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում մշակութային կյանքի ակտիվացման ուղղությամբ իրականացված արդյունավետ ծրագրերից է քաղաքային և գյուղական համայնքների միջև՝ «Մշակութային խաչմերուկ» երրորդ հանրապետական մրցույթը, որի նախընտրական փուլին մասնակցել են 80 համայնք՝ 930 մասնակցով, հանրապետական փուլին՝ 58 համայնք՝ 599 մասնակիցներով: Կազմակերպվել են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակութային կոլեկտիվների և անհատ կատարողների հյուրախաղերը հանրապետության տարբեր բնակավայրերում, հանրապետական մրցույթներ, տարաբնույթ միջոցառումներ: 13 համայնքներում բացվել են ժողովրդական արհեստների և ժամանակակից արվեստների նոր բաժիններ:

Երիտասարդության հարցերի ոլորտ

2014 թվականին երիտասարդության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացվել է 12 ծրագրային ուղղություններով:

Երիտասարդության ոլորտի խնդիրները վեր հանելու և արդյունավետ լուծումներ գտնելու նպատակով իրականացվել են **միջգերատեսչական համագործակցության** միջոցառումներ:

Հայաստանի Հանրապետության և արտերկրի հետ համագործակցության ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 28 միջոցառում, որից 9-ը իրականացվել է Արցախում՝ Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի և վիրահայ երիտասարդների մասնակցությամբ, իսկ մնացած 19 միջոցառումներին, որոնք կազմակերպվել են Հայաստանի Հանրապետության տարբեր քաղաքներում, Վրաստանում և Ռուսաստանի Դաշնությունում՝ ապահովվել է արցախցի երիտասարդների մասնակցությունը:

«Երիտասարդության առողջ ապրելակերպի խթանում, հոգևոր-մշակութային, ռազմահայրենասիրական դաստիարակության և զբաղվածության հիմնախնդրի կարգավորում» (Այցելություն պաշտպանության բանակի զորամասեր և

պատմամշակութային վայրեր) ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 18 միջոցառում, որից 3-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի զորամասերում, 15-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում:

Մասնավորապես, պաշտպանության բանակի Իվանյանի, Մարտակերտի, Քարվաճառի զորամասերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մեծ Թաղեր, Քոլատակ, Ծմակահող, Կարմիր գյուղ, Սզնեք, Սոս, Մաճկալաշեն, Մարաղա, Արաքսավան, Մխիթարաշեն, Տոնաշեն համայնքներում իրականացվել է «Առողջ ապրելակերպ» և «Հոգևոր անվտանգություն» քարոզչական ծրագիրը: Ավելի քան 75 երիտասարդների մասնակցությամբ ճանաչողական այցելություններ են կազմակերպվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի և Շահումյանի շրջաններ:

Երիտասարդական քաղաքացիական և հասարակական նախաձեռնությունների աջակցության, երիտասարդական կառույցների գործունեության ակտիվացման ծրագրի շրջանակներում լրիվ կամ մասնակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 10 կազմակերպության 11 ծրագրի: Այլ ծրագրերի շրջանակներում աջակցություն է ցուցաբերել մի շարք հասարակական կազմակերպությունների՝ տարաբնույթ երիտասարդական միջոցառումների կազմակերպման հարցում:

«Տեղեկատվական ոլորտում երիտասարդության ներգրավման» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 24 միջոցառում, որից 7-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի զորամասերում, 8-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում, 9-ը մայրաքաղաքում: Մասնավորապես, իրականացվել է «Skype Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի զինծառայողների համար» ծրագիրը, կազմակերպվել են սեմինար-դասախոսություններ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության թեմաներով, դասախոսություններ, կլոր սեղաններ, ֆիլմերի ցուցադրություններ, սեմինարներ:

Երիտասարդության զբաղվածության խնդրի լուծմանն ուղղությամբ, ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակներում իրականացվել են «Մասնագիտության ճիշտ կողմնորոշում», «Արցախի երիտասարդության ձայնը», «Արտագնա սեմինարներ 2014 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում», «Երիտասարդ առաջնորդների դպրոց - 2014», «Արցախի երիտֆորում 2014» ծրագրերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երիտասարդ քաղաքագետների, միջազգայնագետների, պատմաբանների, լրագրողների, տնտեսագետների և հոգեբանների մասնակցությամբ:

Երիտասարդության շրջանում ընտանեկան արժեքների քարոզչության ուղղությամբ Մարտակերտի շրջանի Չափար գյուղում կազմակերպվել է «Ընտանեկան ճամբար 2014»

միջոցառումը, որին մասնակցել են 15 ընտանիքներ Ստեփանակերտից ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններից:

Երիտասարդության խոցելի խմբերին հասարակությանն ինտեգրման ծրագրի շրջանակներում ապահովվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 15-25 տարեկան սահմանափակ կարողություններով 17 երիտասարդների մասնակցությունը Սևանա լճի ափին կազմակերպված ճամբարին:

Սպորտ

2014 թվականին զգալի աշխատանքներ են կատարել հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման ու զարգացման, բարձրակարգ մարզիկների պատրաստման, մարզական ֆեդերացիաների և կազմակերպությունների, մանկապատանեկան մարզադպրոցների աշխատանքային գործունեությունը բարելավելու ուղղությամբ:

2014 թվականին ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում կազմակերպվել և անց են կացվել հետևյալ մարզական միջոցառումները՝

- Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում 120 միջոցառում՝ 7934 մարզիկների մասնակցությամբ.

- «Առողջ ապրելակերպ» փառատոն, «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ, «Հույս գավաթ» ֆուտբոլային փառատոն, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի գավաթի» խաղարկություն, հաշմանդամ ազատամարտիկների միջև 2 մարզաձևերից հանրապետական մրցումներ, մարզական զանգվածային միջոցառումներ՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆիզկուլտուրնիկի օրվան, հուշամրցաշարեր՝ նվիրված զոհված ազատամարտիկների հիշատակին և ուսանողական մարզական խաղեր 4 մարզաձևերից՝ 211 ուսանողների մասնակցությամբ.

- 42 հանրապետական մարզական միջոցառում՝ 2295 մարզիկների մասնակցությամբ:

2014 թվականին կազմակերպվել և անց է կացվել 12 ուսումնամարզական հավաք՝ 66 մարզիկների մասնակցությամբ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 12 լավագույն մարզական ընտանիք մասնակցել են Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար կազմակերպված մրցույթին, որտեղ տարբեր մրցաձևերում 4 ընտանիք գրավել են մրցանակային տեղեր:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարզիկները մասնակցել են Հայաստանի Հանրապետության, Եվրոպայի, աշխարհի առաջնություններին, միջազգային մրցաշարերին և գավաթի խաղարկություններին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարզիկները 97 անգամ (1018 հոգի) մասնակցել են Հայաստանի Հանրապետության թիմային և անհատական առաջնությունների, մրցաշարերի, գավաթի խաղարկությունների, 45 անգամ (287 հոգի)՝ միջազգային մրցաշարերի, 11 անգամ (30 հոգի)՝ Եվրոպայի առաջնությունների, 7 անգամ (21 հոգի)՝ աշխարհի առաջնությունների, գավաթի խաղարկությունների: Ընդհանուր առմամբ 2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարզիկները գրավել են 109՝ առաջին, 93՝ երկրորդ, 95՝ երրորդ մրցանակային տեղեր:

2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործել են 19 մարզական ֆեդերացիաներ, որոնց հետ կնքվել են պայմանագրեր պետական բյուջեից ֆինանսավորվելու համար: Հատկացված գումարների նպատակային օգտագործումը մշտապես վերահսկվում է ոլորտը կարգավորող մարմինների կողմից:

Հանրապետության 10 մանկապատանեկան մարզադպրոցներից 4-ը գործում է քաղաք Ստեփանակերտում, 6-ը՝ շրջկենտրոններում: Մարզադպրոցներում գործող 18 մարզաձևերի 239 մարզախմբերում ընդգրկված են 2880 պատանիներ և աղջիկներ, որոնց հետ պարապում են 183 մարզիչ-մանկավարժներ: Մարզախմբերից 126-ը՝ 1470 պարապվողներով, գործում են քաղաք Ստեփանակերտում, 113-ը՝ 1410 պարապվողներով, շրջաններում:

Կենտրոնացված ձևով ձեռք է բերվել մարզագույք և մարզահանդերձանք, բաժանվել մարզադպրոցներին, ֆեդերացիաներին ու կազմակերպություններին:

<u>Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում</u>

2014 թվականին շարունակվել է աշխատանքների իրականացումը՝ պետության տարածքային քաղաքականության իրագործման և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետության հետագա բարձրացման գործընթացի ապահովման ուղղությամբ:

2014 թվականին համակարգվել և վերահսկվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների խորհուրդների նիստերի անցկացումը, ապահովվել դրանցում կառավարության անդամների և այլ պատասխանատուների մասնակցությունը:

Ուսումնասիրվել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության արտագնա նիստերում քննարկվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների հաշվետվությունները: Անցկացված նիստերի արդյունքներով որոշակիացվել են շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները, հանձնարարականներ են տրվել դրանց կենսագործման ուղղությամբ:

Մշակվել և կառավարության նիստերում հաստատվել են հանրապետության մի շարք համայնքների ղեկավարների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, 4 համայնքներում համայնքների ղեկավարների կամ ավագանու անդամների հերթական և 8 արտահերթ ընտրություններ և 2 համայնքներում միավորման հարցով տեղական հանրաքվեներ անցկացնելու մասին որոշումներ, կոնկրետ միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի շրջվարչակազմերը անհրաժեշտ տեխնիկական-կազմակերպական աշխատանքներ իրականացնեն և աջակցություն ցուցաբերեն ընտրական հանձնաժողովներին՝ վերոնշյալ ընտրությունները օրենսդրության սահմաններում կազմակերպված անցկացնելու համար:

«Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան և իրավական հսկողության բարձրագույն մարմնի ու պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի իրավասությունների շրջանակներում ստուգումներ են կատարել հանրապետության շուրջ 12 համայնքներում համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքների ավագանիների լիազորությունների իրականացման դրվածքի վերաբերյալ, ստուգման արդյունքները քննարկվել են շրջանների խորհուրդների նիստերում, միջոցներ ձեռնարկվել բացահատված թերությունները վերացնելու համար:

2014 թվականի մարտ-ապրիլ ամիսներին համայնքի ղեկավարների ու ավագանու աշխատանքների հրապարակայնությունը և բնակչության առջև հաշվետու լինելն ապահովելու նպատակով հանրապետության բոլոր 228 համայնքներում գործող օրենսդրության համաձայն համայնքների ղեկավարների կողմից ներկայացվել են հաշվետվություններ:

Այդ աշխատանքների իրականացումը համակարգվել, վերահսկվել ու ապահովվել է կառավարության անդամների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների մասնակցությամբ, վերլուծվել և ամփոփվել են հաշվետվությունների ժամանակ

բարձրացված հիմնախնդիրները և միջոցներ են ձեռնարկվել դրանք ընթացքավորելու ուղղությամբ:

Վերլուծություններ են իրականացվել և շարունակվել է աշխատանքների իրականացումը տեղեկատվական բազաների ստեղծման ուղղությամբ՝ ըստ համայնքների և շրջանների բնակչության թվաքանակի (ըստ տարիքային խմբերի), տեղական բյուջեների (ըստ եկամտատեսակների և ծախսերի), գյուղատնտեսական նպատակային հողերի (ըստ հողատեսքերի, հարկերի և վարձավճարների):

Հանրապետության թվով 85 համայնքների ղեկավարների համար կազմակերպվել են սեմինար-դասընթացներ՝ 2014 թվականի համապատասխան ծրագրի շրջանակներում: Ծրագիրը նպատակ ուներ նպաստել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների ղեկավարների՝ համայնքային նշանակության հարցերը լուծելու և համայնքային սեփականությունը տնօրինելու կարողությունների, կառավարչական հմտությունների զարգացմանը:

Միգրացիոն քաղաքականություն

Հաշվետու ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների, վարչակազմերից ստացված հայտերի հիման վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականիի ապրիլի 15-ի N 121 որոշմամբ սահմանված կարգով վերաբնակչի կարգավիճակ է տրվել 96 ընտանիքի (389 շունչ, որից 186 երեխա):

Ստուգայցեր են կատարվել Մարտակերտի շրջանի Նոր Այգեստան, Քաշաթաղի շրջանի Բերձոր, Կովսական, Մարտունու շրջանի Վազգենաշեն համայնքներ:

Ավարտին է հասցվել փախստականների, վերաբնակիչների էլեկտրոնային և փաստաթղթային տվյալների մուտքագրումը համակարգչային նորամշակ ծրագրում՝ ավելի քան 24 400 անձի մասին մանրամասն տեղեկությունների ընդգրկմամբ:

Լիբանանի «Արցախ Ֆոնդ» հիմնադրամի «Նոր կյանք, նոր հույս» ծրագրից օգտվել են 3 և ավելի երեխաններ ունեցող 112 ընտանիքներ, իսկ 2014 թվականի ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 17,170.0 հազ. ՀՀ դրամ:

Առաջնորդվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N709-Ն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 964-Ա և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 5-ի N 28-Ա

որոշումներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի N 287-Ա որոշմամբ ստեղծված բնակելի տների սեփականաշնորհման համար միջգերատեսչական հանձնաժողովների կողմից ուսումնասիրվել են 10 տարի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մշտապես բնակված 210 վերաբնակ ընտանիքների գործեր. արդեն սեփականաշնորհվել են 45 ընտանիքներին հատկացված բնակելի տները, իսկ ավելի քան 160 դիմումներ կըթացքավորվեն առկա բացթողումների ուղղումներից հետո:

Համակարգվել են ավելի քան 60 վերաբնակման ցանկություն հայտնած ընտանիքների տվյալների հավաքագրման աշխատանքները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 24-ին N 522-Ն որոշմամբ ստեղծված «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված անձանց ապահովագրական ստաժը սահմանող հանձնաժողով»-ի կողմից շարունակվել են փախստականի կարգավիճակ ստացած անձանց կորսված ապահովագրական ստաժի վերականգնման աշխատանքները: Հանձնաժողովը վերականգնել է 2 դիմումատուների՝ մինչև Ադրբեջանից բռնագաղթելն աշխատած տարիների ապահովագրական (աշխատանքային) ստաժը՝ այսպիսով ընդհանուրը հասցնելով 147-ի:

Պետական գույքի կառավարում և մասնավորեցում

2014 թվականի ընթացքում շարունակել է իրականացվել պետական գույքի հաշվառման, կառավարման, մասնավորեցման և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության կարգավորմանն ու լուծարման բնագավառներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը՝ առաջնորդվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

2014 թվականի ընթացքում իրականացվել է անշարժ գույքի թվով 3,301 միավորի նկատմամբ պետական սեփականության իրավունքի գրանցումն ու հաշվառումը:

Շարունակվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում կառուցված գծային ենթակառուցվածքների գրանցման և հաշվառման աշխատանքները:

Կազմվել, ծածկագրվել և արխիվացվել է 3,301 միավոր պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի գործ, որից տեսաներածվել է 2,119-ը:

Պետական գույքի մասնավորեցման և օտարման գործընթացի շրջանակներում իրականացված միջոցառումների և կատարված աշխատանքների արդյունքում ծրագրով նախատեսված 35.0 մլն ՀՀ դրամի դիմաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե մուտքագրվել է 58.2 մլն ՀՀ դրամ, այդ թվում՝ գույքի մասնավորեցումից՝ 15.5 մլն ՀՀ դրամ, օտարումից՝ 42.7 մլն ՀՀ դրամ: Համայնքային բյուջե փոխանցվել է 204.0 հազ. ՀՀ դրամ:

Վարձակալության դիմաց պետական բյուջեի մուտքերը կազմել են 480.0 հազար ՀՀ դրամ:

Փակ բաժնետիրական ընկերությունների գույքի օտարումից մուտքագրվել և օրենսդրությամբ սահմանված կարգով վերջիններիս է փոխանցվել 2.0 մլն ՀՀ դրամ:

Բյուջետային քաղաքականություն

2014 թվականի ընթացքում բյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված է եղել բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացների իրականացմանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի 2014 թվականի մայիսի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 188-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման և կազմման աշխատանքները:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորման ու մեթոդաբանության ոլորտում 2014 թվականին կատարված աշխատանքները հիմնականում ուղղված են եղել հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանը, հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական օժանդակության ցուցաբերմանը, հաշվապահների և աուդիտորների որակավորման քննությունների անցկացմանը:

Հաշվետու տարում մշակվել և ընդունվել են հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝ փոփոխություններ և լրացումներ են կատարվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվապահների և աուդիտորների որակավորման քննությունների հարցաշարերում:

Պարբերաբար իրականացվել են հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական և խորհրդատվական աշխատանքներ, մասնավորապես՝ սեմինար-խորհրդակցություններ են կազմակերպվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարչական և այլ պետական հիմնարկների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, 50 տոկոսից ավելի պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի, Մարտակերտի և Մարտունու շրջաններում գրանցված պետական կառավարչական հիմնարկների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և փակ բաժնետիրական ընկերությունների հաշվապահների համար, որոնց ընթացքում պարզաբանվել են ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները և առանձնահատկությունները, լիազոր մարմինների հաշվապահների կողմից պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվետվություններում արտացոլված տվյալների ստուգման մեթոդիկան և հաշվապահական հաշվառման վերաբերյալ մի շարք այլ հարցեր, ներկայացվել են «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի ընդունման հետ կապված՝ 2014 թվականի ընթացքում արձակուրդային գումարների և անաշխատունակության նպաստների հաշվարկման առանձնահատկությունները:

Կազմակերպվել են հաշվապահների և աուդիտորների որակավորման քննություններ:

Գնումների գործընթացի կարգավորման ոլորտում «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների կատարման և գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և ընդունվել են հետևյալ իրավական ակտերը.

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 384-Ն որոշումը.
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի փետրվարի 25-ի «Ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթի և դրա գնահատման կարգը հաստատելու մասին» N 16-Ն հրամանը,
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի փետրվարի 25-ի «Պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների

ընտրանքային գնահատման կարգը և գնումների վերաբերյալ տվյալների վերլուծության և էլեկտրոնային տեղեկատուի վարման կարգը հաստատելու մասին» N 15-Ն հրամանը,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի փետրվարի 25-ի «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների չափերը սահմանելու մասին» N 14-Ն հրամանը,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի ապրիլի 9-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի հունվարի 22-ի N 9-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 43-Ն հրամանը:

Առաջին անգամ մշակվել և հրապարակվել են «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը», որը հեշտացնում է պետական պատվիրատուների գործողությունները գնման ընթացակարգերի կազմակերպման հարցում և փոքրացնում տեխնիկական սխալների հավանականությունը:

«Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումների կատարման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ներդրվել է շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին էլեկտրոնային եղանակով միաժամանակյա ծանուցման (հրավերների ուղղարկման) համակարգը:

<u>Հարկային քաղաքականություն</u>

2014 թվականին շարունակվել են աշխատանքները հսկողական գործընթացների արդյունավետության բարձրացման, օրենսդրական դրույթների կատարելագործման, հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնման, ինչպես նաև համակարգի արդիականացման ուղղություններով:

2014 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքի մասով բյուջե է մուտքագրվել 30,210.4 մլն ՀՀ դրամ, գերազանցելով ծրագրավորված ցուցանիշը 0.3 տոկոս կամ 91.7 մլն ՀՀ դրամով:

Նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը աճել են 14.7 տոկոսով կամ 3,863.3 մլն ՀՀ դրամով:

2014 թվականին հարկային մարմնի կողմից իրականացվել է 203 ընդհանուր բնույթի (բյուջեների հետ փոխհարաբերությունների ճշտության) ստուգում: Նշված ստուգումներով

հաշվարկված պարտավորությունները կազմել են շուրջ 1,208.2 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 979.8 մլն ՀՀ դրամի դիմաց: Հաշվետու տարում կատարված ստուգումներով բյուջե մուտքագրված գումարները կազմել են 801.6 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 628.9 մլն ՀՀ դրամի դիմաց, իսկ ընթացիկ և նախորդ տարիներին կատարված բոլոր ստուգումների մասով բյուջե է մուտքագրվել 1,114.3 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 1,027.9 մլն ՀՀ դրամի դիմաց:

Տարվա ընթացքում կատարվել են հսկիչ- դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության 48, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության 14 ստուգումներ, հայտնաբերվել առանց աշխատանքային պայմանագիր կնքելու վարձու աշխատանք օգտագործելու 5 և ապօրինի գործունեության իրականացման 7 դեպքեր:

Կամերալ հսկողության շրջանակներում իրականացվել են հարկ վճարողների 8300 հաշվարկ-հաշվետվությունների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 1200 խախտումների մասով հարկ վճարողներին առաջարկվել է կատարել ճշտումներ, որոնցից 770 խախտման մասով հարկատուների կողմից կատարվել են ճշգրտումներ՝ զերծ մնալով հետագա ստուգումներով առաջադրվելիք լրացուցիչ պարտավորություններից:

Հարկ վճարողների իրացման իրական ծավալների վեր հանման նպատակով հացի արտադրության ոլորտում գործող 67 հարկ վճարողների մոտ տարբեր հաշվետու ժամանակահատվածներում իրականացվել են 145 ուսումնասիրություններ և չափագրումներ, որոնց արդյունքում 48 հարկ վճարողների մոտ հայտնաբերվել են իրացման ծավալների էական թերհայտարարագրումներ և առաջարկվել է արտացոլել իրական ծավալները: Արդյունքում նշված հարկ վճարողների իրացման ծավալները նախորդ հաշվետու ժամանակահատվածների նկատմամբ աճել են 30 տոկոսով կամ շուրջ 300.0 մլն ՀՀ դրամով:

2014 թվականի ընթացքում կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին թվով 1231 որոշում՝ 20.0 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, որից գանձվել է 18.2 մլն ՀՀ դրամը կամ առաջադրվածի 91.0 տոկոսը:

Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված 1 քրեական գործով՝ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու փաստի առթիվ նախաքննության ընթացքում վերականգնվել է 5.0 մլն ՀՀ դրամ գումարի չափով պետությանը պատճառված վնասը, իսկ վարույթը կարճված 5 քրեական գործերով վերականգնվել է ընդհանուր առմամբ 21.5 մլն ՀՀ դրամ գումարի չափով պետությանը պատճառված վնասը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել թվով 158 հայց՝ 787.7 մլն ՀՀ դրամ հայցապահանջի գումարով:

Առաջին անգամ պարտավորություններ կուտակած հարկ վճարողների նկատմամբ կիրառվել է նաև սնանկացման գործընթաց: Մասնավորապես, դատարան է ներկայացվել պարտապան հարկ վճարողին սնանկ ճանաչելու վերաբերյալ 17 հայցադիմում՝ 761.1 մլն ՀՀ դրամ պարտավորության գումարով, որից 1-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքին համապատասխան, կանխամտածված սնանկության փաստի առթիվ՝ մեղադրական եզրակացությամբ:

2014 թվականի ընթացքում հարկային քաղաքականության ոլորտում նախաձեռնվել են 9 օրենքների նախագծեր: Օրենսդրական փոփոխությունները, որոնք կիրառության մեջ են դրվել 2015 թվականի հունվարի 1-ից, միտված են հանրապետության գործարար միջավայրի բարելավմանը, հարկային վարչարարության մեղմացմանն ու առկա տնտեսական պայմաններին ներդաշնակեցմանը:

2014 թվականին հարկային վարչարարական բարեփոխումների շրջանակներում առանցքային ուղղություն է շարունակել համարվել հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը, հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնումը: Այս ուղղությամբ միջոցառումներն իրականացվել են ինչպես զանգվածային, այնպես էլ անհատական իրազեկման մակարդակներով: Մասնավորապես, 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» նոր օրենքի կիրարկումն ապահովելու, եկամտային հարկի ու գրանցման հայտի էլեկտրոնային եղանակով ներկայացման գործընթացում գործատուներին առավելագույն աջակցություն ցուցաբերելու նպատակով, 2014 թվականի հունվար ամսից սկսած, իրականացվել են իրազեկման և ուսուցողական սեմինարներ, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են 1343 հարկ վճարողների ներկայացուցիչներ, հրապարակվել է եկամտային հարկի վերաբերյալ մեթոդական ուղեցույցը:

Հանրապետության բոլոր շրջկենտրոններում և Ստեփանակերտ քաղաքում ստեղծվել են սպասարկման կետեր, որոնք գործատուներին օժանդակում են անձնավորված հաշվարկի էլեկտրոնային եղանակով ներկայացման գործընթացքում:

Տարվա ընթացքում թվով 2304 գործատուների հետ կնքվել են հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու վերաբերյալ պայմանագրեր և տրվել օգտվողի անուն ու գաղտնաբառ:

Հարկ վճարողների կողմից հարկային օրենսդրության տեղեկացվածության աստիճանի բարձրացման, թույլ տրվող սխալների կրճատման նպատակով մշակվել է իրազեկման միջոցառումների ծրագիր, ընտրվել հարկ վճարողների թիրախային խմբեր, որի շրջանակներում տարվա ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել հացի արտադրությամբ, բենզինի և դիզելային վառելիքի վաճառք իրականացնող, հանրապետության տարածք գյուղատնտեսական մթերքներ ներմուծող, շինարարության և առևտրի ոլորտներում գործող ավելի քան 200 հարկ վճարողների հետ, ներկայացվել ոլորտի հարկման, ստուգումների ժամանակ առավել հաճախակի թույլ տրվող սխալների հետ կապված հարցերը, հարցուպատասխանի ձևով պարզաբանումներ տրվել նաև նրանց հուզող հարցերին:

Պարբերաբար իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական կայքէջի միջոցով՝ տեղեկատվություն է տրամադրվել հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների, հարկ վճարողների գործունեության կասեցումների, օպերատիվ հետախուզական բացահայտումների և համակարգում կազմակերպվող մրցույթների վերաբերյալ, տրվել իրազեկման, նախազգուշական, քարոզչական բնույթի հայտարարություններ, հրապարակվել ամսական վիճակագրական տեղեկություններ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում շարունակվել են աշխատանքները միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի մշակման ուղղությամբ. առաջին անգամ հանրապետությունում ներդրվել է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը: Այս համակարգի ներդրումն ապահովեց «Եկամտային հարկի» մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոր օրենքի գործնականում կիրարկումը, բավականին հեշտացնելով հարկ վճարողների և հարկային մարմնի աշխատանքները:

Զուգահեռաբար աշխատանքներ են տարվել նաև համակարգչային ցանցի ընդլայնման և անհրաժեշտ սերվերներով համալրման ուղղությամբ, որը կապահովի համակարգի անխափան աշխատանքն ու տեղեկատվական անվտանգությունը:

2014 թվականին իրականացված աշխատանքների շարքում մեծ է նաև հարկային ծառայողների ուսուցման ուղղությամբ իրականացված աշխատանքների դերը: Ուսումնական կարիքների գնահատման և առկա ուսուցման կարողությունների հիման վրա մշակվել է հարկային ծառայողների տարեկան ուսուցման ծրագիր-ժամանակացույց, որի շրջանակներում կենտրոնական ապարատի մասնագետների կողմից կազմակերպվել են երկարատև և կարճատև դասընթացներ՝ հաշվառման, սպասարկման,

վերահսկողության, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և մի շարք այլ թեմաներով, որոնց, ընդհանուր առմամբ, մասնակցել են 109 աշխատակիցներ:

Անշարժ գույքի կադաստր

2014 թվականի ընթացքում ապահովվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող անշարժ գույքի կադաստրի զարգացման 2014 թվականի համալիր ծրագիրը հաստատելու մասին» N 58-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացումն ամբողջությամբ:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված 321.5 մլն ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների հաշվին կադաստրի համակարգի կողմից իրականացվել են 10 ծրագրային աշխատանքներ, այդ թվում.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում համայնքների բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման և կադաստրային քարտեզագրման աշխատանքներ:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման աշխատանքներ 1560 հեկտարի վրա, կադաստրային քարտեզագրման աշխատանքներ 3645 անշարժ գույքի միավորի նկատմամբ:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրական անվանումների հաշվառման, գրանցման և պետական քարտադարանի ստեղծման աշխատանքներ:

Հաշվառման աշխատանքներ են իրականացվել 31, իսկ գրանցման աշխատանքներ՝ 71 համայնքներում:

3. Հողի և դրա վրա գտնվող շենքերի և շինությունների, անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների իրականացման աշխատանքներ:

Կատարվել է անշարժ գույքի շուկայի 2013-2014 թվականների եռամսյակային, կիսամյակային և տարեկան վերլուծություն: Ծրագրի շրջանակներում իրականացվել են անշարժ գույքի միասնական գնային իրավիճակի համակարգված դիտարկումների իրականացում և վերլուծություն, որոնց արդյունքները պարբերաբար հրապարակվել են «Ազատ Արցախ» հանրապետական թերթում՝ հասարակության լայն շերտերին շուկայի իրավիճակի մասին իրազեկելու նպատակով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների և համայնքների սահմանների ամրացման աշխատանքներ:

Իրականացվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 7 շրջանների, Շահումյանի շրջանի 16, Քաշաթաղի շրջանի 2 համայնքների վարչական սահմանների ամրացման աշխատանքներ:

5. Պետական և համայնքային սեփականություն համարվող շենքերի, շինությունների և հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման և պետական հիմնարկներին տեղեկատվության տրամադրման աշխատանքներ:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հայտերի հիման վրա իրավունքի պետական գրանցում է իրականացվել 878 միավոր պետական սեփականության և 176 միավոր համայնքային սեփականության նկատմամբ:

6. Գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներ:

Գրանցման աշխատանքներ են իրականացվել անշարժ գույքի 350 միավորի նկատմամբ :

7. Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրման, զարգացման և տեղեկատվական բանկի ստեղծման աշխատանքներ:

Տեղեկատվական բանկի ստեղծման նպատակով իրականացվել է 4,402 կադաստրային գործերի տվյալների մուտքագրում և 237,287 էջերի տեսաներածում:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ:

Աշխարհատեղեկատվական համակարգի ստեղծման նպատակով իրականացվել են քարտեզագրման աշխատանքներ Շուշի քաղաքում՝ 2.6 հեկտարի նկատմամբ:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի հաշվառման և հողային հաշվետվությունների կազմման աշխատանքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքներ են իրականացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի 8 և Մարտունու շրջանի 2 համայնքներում:

10. Իրավունքի պետական գրանցում չստացած պետության սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հաշվառման (չափագրման) աշխատանքներ: Ծրագրով նախատեսված աշխատանքներ են իրականացվել անշարժ գույքի 200 միավորի նկատմամբ:

2014 թվականի արդյունքներով ընդհանուր առմամբ տարածքային ստորաբաժանումների ընթացիկ գործունեության տվյալներով կատարվել են անշարժ գույքի 9,646 միավորի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքներ և տրամադրվել է անշարժ գույքի 7,032 միավորի վերաբերյալ տեղեկատվություն:

Տեղեկատվական կենտրոնի կողմից տրամադրվել է անշարժ գույքի 3,766 միավորի վերաբերյալ տեղեկատվություն:

Շարունակվել են աշխատանքները **հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության բնագավառում:** Գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից 2014 թվականին տեսչական ստուգումներ են իրականացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր շրջաններում: Տեսչության կողմից արձանագրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների խախտումներ, որոնք վերացնելու համար տրվել են համապատասխան ցուցումներ:

2014 թվականի ընթացքում իրականացվել են 12,632.2 հա վարձակալության տրամադրված գյուղնշանակության հողերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքներ, որից Ասկերանի շրջանում՝ 1,013.5 հա, Մարտունու շրջանում՝ 1,436.3 հա, Մարտակերտի շրջանում՝ 522.5 հա, Հադրութի շրջանում՝ 1418.8 հա, Շուշիի շրջանում՝ 8.0 հա, Շահումյանի շրջանում՝ 69.3 հա, Քաշաթաղի շրջանում՝ 8,163.8 հա:

2014 թվականին շարունակվել են շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրերով վարձակալության իրավունքի պետական գրանցման աշխատանքները: Ընդհանուր առմամբ, գրանցվել է շարժական գույքի 34 միավորի նկատմամբ գրավի իրավունք:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան իրականացվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում «Անշարժ գույքի գնահատում» գործունեություն իրականացնող որակավորված կազմակերպությունների գործունեության ստուգումներ:

Հաշվետու տարում մշակված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Պետական բյուջեի եկամուտների վերլուծությունը

2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի սեփական եկամուտները կազմել են 31485369.5 հազար ՀՀ դրամ (ներառյալ գործատուի մոտ եկամտային հարկից կատարված ծախսերի գումարը 575124.2 հազար ՀՀ դրամ) կամ տարվա ծրագրով նախատեսված մուտքերի մակարդակի 92.7 տոկոսը:



2013 թվականի համեմատ 2014 թվականի պետական բյուջեի եկամուտներն աճել են 12.8 տոկոսով կամ 3566091.0 հազար ՀՀ դրամով: Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 30210352.5 հազար ՀՀ դրամ, որը կազմում է պլանավորված ցուցանիշի 100.3 տոկոսը, ընդ որում 2013 թվականի համեմատ այդ ցուցանիշն աճել է 14.7 տոկոսով կամ 3863288.1 հազար ՀՀ դրամով:



«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան պետական բյուջեի սեփական եկամուտներում, ըստ եկամտատեսակների, ներառված են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու տարում կազմել են 390790.3 հազար ՀՀ դրամ:

2014 թվականի ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների 30210352.5 հազար ՀՀ դրամը կամ 95.9 տոկոսը բաժին է ընկել հարկային եկամուտներին և պետական տուրքերին: Պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 1275017.0 հազար ՀՀ դրամ, նախորդ տարվա 1572214.1 հազար ՀՀ դրամի դիմաց:





<u>Հարկային եկամուտներ</u>

2014 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 29795668.6 հազար ՀՀ դրամ՝ պլանային ցուցանիշի 29710000.0 հազար ՀՀ դրամի դիմաց:

2013 թվականի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 14.9 տոկոսով կամ 3855889.8 հազար ՀՀ դրամով: Հարկային եկամուտների հաշվին է ապահովվել պետական բյուջեի եկամուտների 94.6 տոկոսը:



Բացառությամբ ավելացված արժեքի հարկի գերակատարվել են պետական բյուջեի հարկային եկամուտների բոլոր եկամտատեսակների պլանային առաջադրանքները:

<u>Ավելացված արժեքի հարկ</u>

2014 թվականին ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 11865348.8 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 39.8 տոկոսը և ընդհանուր բյուջետային եկամուտների 37.7 տոկոսը, պլանավորված ցուցանիշը կատարվել է 99.2 տոկոսով կամ թերակատարվել է 100451.2 հազար ՀՀ դրամով: Նախորդ տարվա համեմատ ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 3569470.8 հազար ՀՀ դրամի չափով կամ 43.0 տոկոսով: Նախորդ տարվա նկատմամբ մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է շինարարության, էներգետիկայի և կապի ոլորտներում գործունեություն իրականացվող հարկ վճարողների կողմից մուտքագրված գումարների աճով:

<u>Ակցիզային հարկ</u>

Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ակցիզային հարկի հաշվին ապահովվել է 166876.5 հազար ՀՀ դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 0.6 տոկոսը և ընդհանուր բյուջետային եկամուտների 0.5 տոկոսը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 16876.5 հազար ՀՀ դրամով կամ 11.3 տոկոսով, իսկ նախորդ տարվա մակարդակը թերակատարվել է 17.4 տոկոսով կամ պակաս 35095.8 հազար ՀՀ դրամով: Ակցիզային հարկի գծով նախորդ տարվա նկատմամբ մուտքերի նվազումը պայմանավորված է ակցիզային հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալների նվազմամբ:

<u>Շահութահարկ</u>

2014 թվականին շահութահարկի գծով պետական բյուջեի եկամուտները կազմել են 2065695.6 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 6.9 տոկոսը և ընդհանուր եկամուտների 6.6 տոկոսը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 0.5

տոկոսով կամ 9895.6 հազար ՀՀ դրամով: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի գծով պետական բյուջեի մուտքերն նվազել են 382329.3 հազար ՀՀ դրամով կամ 15.6 տոկոսով: Նվազումը պայմանավորված է բանկային ոլորտի և «Բեյզ Մեթըլս» փակ բաժնետիրական ընկերության կողմից մուտքագրված գումարների նվազմամբ:

Եկամտային հարկ

2014 թվականի եկամտային հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 12110696.5 հազար ՀՀ դրամ (հաշվի առած ծախսերի 2014 թվականի չափը՝ 575124.2 հազար ՀՀ դրամ)՝ ապահովելով հարկային եկամուտների 40.6 տոկոսը և ընդհանուր բյուջետային եկամուտների 38.5 տոկոսը,պլանավորված ցուցանիշը կատարվել է 102.0 տոկոսով կամ ավել 240996.5 հազար ՀՀ դրամ : Նախորդ տարվա (եկամտահարկ + սոցապահովության վճար) համեմատ եկամտային հարկի գծով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի մուտքերն աճել են 1488726.1 հազար ՀՀ դրամի չափով կամ 14.0 տոկոսով : Եկամտային հարկի գծով պետական բյուջեի մուտքերի ավելացումը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով դրույքաչափի՝ 1 տոկոսային կետով աճով, 2014 թվականի հուլիսի 1-ից պետական կառավարման մարմիններում աշխատանքի վարձատրության նոր համակարգի ներդրման և վարչարարական աշխատանքների արդյունքում հայտարարագրված աշխատավարձերի բարձրացմամբ:

Հաստատագրված վճարներ

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված հաստատագրված վճարների գումարը կազմել է 580739.7 հազար ՀՀ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 1.9 տոկոսը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 3.6 տոկոսով կամ 20039.7 հազար ՀՀ դրամով: Նախորդ տարվա համեմատ հաստատագրված վճարների գծով մուտքերն աճել են 14374.5 հազար ՀՀ դրամով կամ 2.5 տոկոսով:

Առևտրի հարկ

2014 թվականին պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների 6.1 տոկոսը և ընդհանուր եկամուտների 5.8 տոկոսը ապահովվել է առևտրի հարկի հաշվին: Այս հարկատեսակի գծով մուտքերը կազմել են 1822208.6 հազար ՀՀ դրամ կամ պլանային ցուցանիշի 100.5 տոկոսը : Նախորդ տարվա համեմատ մուտքերը նվազել են 9.9 տոկոսով կամ 200459.7 հազար ՀՀ դրամով : Հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված առևտրի հարկի գումարների նվազումը պայմանավորված է այն հանգամանքով , որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառված , սակայն Հայաստանի Հանրապետության տարածքում մասամբ առևտրային գործունեություն իրականացնող հարկ վճարողները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունների միջև կնքված հարկման որոշ հարցերի վերաբերյալ հուշագրի,հաշվետու տարվա մարտի 1-ից առևտրի հարկի փոխարեն հարկերը հաշվարկում են ընդրանուր հարկման կարգով:

Բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման վճարներ

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով 2014 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 512031.6 հազար ՀՀ դրամ, պլանավորված ցուցանիշը կատարվել է 102.4 տոկոսով: 2013 թվականի համեմատ վճարի գծով պետական բյուջեի մուտքերն աճել

են 139638.1 հազար ՀՀ դրամով կամ 37.5 տոկոսով: Նախորդ տարվա նկատմամբ մուտքերի աճը պայմանավորված է շինարարական մի շարք կազմակերպությունների կողմից նախորդ տարվա համեմատ մուտքերի աճով , ինչպես նաև «Բեյզ Մեթըլս» փակ բաժնետիրական ընկերության կողմից օրենսդրական փոփոխության արդյունքում հանքարդյունաբերական գործունեությունից ռոյալթիի փոխարեն բնօգտագործման վճարի հաշվարկմամբ:

<u>Ավտոճանապարհների շինարարության և նորոգման համար կատարվող մասհանումներ</u>

Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների մուտքերը հաշվետու տարում կազմել են 456418.3 հազար ՀՀ դրամ, նախատեսված ցուցանիշը կատարվել է 100.5 տոկոսով կամ ավել 2118.3 հազար ՀՀ դրամով: Նախորդ տարվա համեմատ մասհանումների գծով մուտքերն նվազել են 0.5 տոկոսով :

<u>Այլ հարկային եկամուտներ</u>

Այլ հարկային եկամուտների գծով 2014 թվականի մուտքերը կազմել են 78929.5 հազար ՀՀ դրամ, որը ծրագրավորված ցուցանիշը գերազանցել է 856.5 հազար ՀՀ դրամով կամ 1.1 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ այլ հարկային եկամուտների գծով մուտքերն նվազել են 16.5 տոկոսով կամ 15635.6 հազար ՀՀ դրամի չափով: Նախորդ տարվա մուտքերի նկատմամբ նվազումը պայմանավորված է այդ եկամտատեսակի մասով ստուգումներից մուտքագրված գումարների նվազմամբ:

<u>Կոնցեսիոն վճար</u>

Կոնցեսիոն վճարի գծով 2014 թվականի պետական բյուջեի եկամուտները կազմել են 10363.7 հազար ՀՀ դրամ, ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 172.7 տոկոսով կամ ավել 4363.7 հազար ՀՀ դրամի չափով: Նախորդ տարվա համեմատ կոնցեսիոն վճարի գծով մուտքերն աճել են 4495.3 հազար ՀՀ դրամով կամ 76.6 տոկոսով:

<u>Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ</u>

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով 2014 թվականի պետական բյուջեի եկամուտները կազմել են 126359.8 հազար ՀՀ դրամ կամ ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 119.3 տոկոսով, իսկ նախորդ տարվա համեմատ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով մուտքերն աճել են 54.5 տոկոսով կամ 44555.8 հազար ՀՀ դրամով:

<u>*Պետական տուրք*</u>

Պետական տուրքի գծով 2014 թվականի բյուջեի մուտքերը կազմել են 414683.9 հազար ՀՀ դրամ՝ ապահովվելով պետական բյուջեի եկամուտների 1.3 տոկոսը:

Պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 6001.5 հազար ՀՀ դրամով կամ 1.5 տոկոսով: 2013 թվականի համեմատ պետական տուրքի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 1.8 տոկոսով կամ 7398.3 հազար ՀՀ դրամով:

Այլ եկամուտներ

2014 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 1275017.0 հազար ՀՀ դրամ կամ նախատեսված ցուցանիշի 38.0 տոկոսը:

Բաժնետիրական կապիտալում ներդրումներից ստացվող շահութաբաժինները ծրագրային ցուցանիշը կազմել է 1700000.0 հազար ՀՀ դրամ, իսկ մուտքագրված գումարը՝ 99657.1 հազար ՀՀ դրամ:

2014 թվականի արդյունքներով պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող հողի և գույքի վարձակալությունից պետական բյուջե է մուտքագրվել 63457.0 հազար ՀՀ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 24.4 տոկոսը:

Պետության կողմից տրված վարկերի դիմաց տոկոսավճարներից մուտքերը կազմել են 13539.5 հազար ՀՀ դրամ կամ պլանավորված ցուցանիշը 27.1 տոկոսը:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը կազմել են 180362.6 հազար ՀՀ դրամ կամ բյուջեով նախատեսված ցուցանիշը կատարվել է 63.3 տոկոսով:

Այլ եկամուտները կազմել են 589041.5 հազար ՀՀ դրամ կամ բյուջեով նախատեսված ցուցանիշը կատարվել է 87.2 տոկոսով, որից ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 332322.2 հազար ՀՀ դրամ կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 121.6 տոկոսով:

Կադաստրի գործառնություններից եկամուտները կազմել են 187377.8 հազար ՀՀ դրամ կամ ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 87.2 տոկոսով:

Անտառանյութի իրացումից մուտքերը կազմել են 141581.5 հազար ՀՀ դրամ կամ ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 83.3 տոկոսով:

Միջպետական վարկ

Հայաստանի Հանրապետությունից ստացված միջպետական վարկը հաշվետու տարում կազմել է 42772683.0 հազար ՀՀ դրամ:

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորում

2014 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրը հանդիսացել է բյուջեի փոխառու միջոցները , որը կազմել է 3873065.0 հազար ՀՀ դրամ :

Ապառքների մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ 2015 թվականի հունվարի մեկի դրությամբ հարկերի գծով ապառքները կազմել են 2601912.1 հազար ՀՀ դրամ, պարտադիր վճարների գծով՝ 70967.9 հազար ՀՀ դրամ, իսկ շահութաբաժինների գծով՝ 31794.1 հազար ՀՀ դրամ:

Պետական բյուջեի ծախսերի վերլուծությունը

2014 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են 78126479.6 հազար ՀՀ դրամի ծախսեր՝ կազմելով նախատեսված ծրագրի 96.1 տոկոսը:

Գործառական դասակարգմամբ

Ընհանուր բնույթի հանրային ծառայություններ

Պետական ծախսերի այս բաժնում արտացոլված են օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման, պետական կառավարման, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների, ինչպես նաև արտաքին հարաբերությունների հետ կապված ծախսեր: Այս ուղղությամբ ծախսվել է պետական միջոցների 11.6 տոկոսը կամ 9102031.4 հազար ՀՀ դրամ: Ընհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի կատարողականն ապահովվել է բյուջեով նախատեսված ցուցանիշի 87.8 տոկոսի չափով:

Հասարակական կարգի պահպանություն,
անվտանգություն և դատական գործունեություն

Հասարակական կարգի պահպանություն, անվտանգություն և դատական գործունեություն բաժնի ծախսերի միջոցով ֆինանսավորվել են դատախազության, ոստիկանության,ազգային անվտանգության և փրկարար ծառայության համակարգերը, դատական դեպարտամենտի, գերագույն, վերաքննիչ և ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները: Այս բաժնի ծախսերը կազմել են ընդհանուր պետական ծախսերի 7.4 տոկոսը կամ 5782120.1 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը իրականացվել է նախատեսված ծավալի 96.5 տոկոսի չափով:

Տնտեսական հարաբերություններ

Այս բաժնի ծախսերի միջոցով ֆինանսավորվել են ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների հետ կապված ծախսերը պետական կառավարման հանրապետական մարմինների պահպանում, աջակցություն Արցախի ներդրումային հիմնադրամին, տնտեսական զարգացման ծրագրեր), գյուղատնտեսության (գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր, աջակցություն գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին), անտառային տնտեսության, տրանսպորտի և այլ բնագավառների գործունեության ծախսերը (պատվիրակությունների ընդունելություններ, զբոսաշրջության զարգացման ծրագրեր): Այս բաժնի ծախսերի ֆինանսավորմանն է ուղղվել պետական բյուջեի ծախսերի 10.3 տոկոսը կամ 8068948.7 հազար ՀՀ դրամ, ինչը կազմում է ծրագրավորված ցուցանիշի 95.6 տոկոսը:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

Շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերը կազմել են 105012.0 հազար ՀՀ դրամ, ինչը կազմում է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 0.1 տոկոսը, ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 89.5 տոկոսով: Այս բաժնի ծախսերը ողղվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի պահպանմանը:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

Պետական ծախսերի այս բաժնում արտացոլված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանման և ջրամատակարարման ծառայությունների սուբսիդավորման ծախսերը: Ծախսվել է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 0.6 տոկոսը կամ 443891.2 հազար ՀՀ դրամ, կատարողականն ապահովվել է բյուջեով նախատեսված ցուցանիշի 95.4 տոկոսի չափով:

Առողջապանություն

Պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման այս բաժնի միջոցով ֆինանսավորվել են առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմինը, բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսերը, արտահիվանդանոցային, հիվանդանոցային և հանրային առողջապահական ծառայությունների իրականացման հետ կապված ծախսերը: Առողջապահության ֆինանսավորման փաստացի ծավալները կազմել են 5280834.6 հազար ՀՀ դրամ՝ ապահովվելով բյուջեով նախատեսված ցուցանիշի 99.2 տոկոսը: Առողջապահությանն ուղղված ծախսերը կազմել են պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 6.8 տոկոսը:

Հանգիստ, մշակույթ և կրոն

Այս բաժնի ծախսերի գծով ֆինանսավորումն ընդգրկում է ինչպես նշված բնագավառների պետական կառավարման, այնպես էլ հանգստի և սպորտի, մշակութային, ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման, հրատարակչական, կրոնական և հասարակական այլ ծառայությունների ֆինանսավորումը: Այս ուղղությամբ ծախսված

միջոցները կազմել են ընդհանուր ծախսերի 3.4 տոկոսը և ապահովել են նախատեսված մակարդակի 97.7 տոկոսը՝ կազմելով 2678979.8 հազար ՀՀ դրամ:

Կրթություն

Կրթության բաժնի ծախսերի կազմում բյուջեից ֆինանսավորվել են նշված բնագավառի պետական կառավարման, կրթության ամբողջ համակարգի և կրթությանն օժանդակ ծառայությունները: Նախատեսված ծավալների նկատմամբ փաստացի ֆինանսավորումը կազմել է 96.0 տոկոս, որի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում կազմել է 15.3 տոկոս: Հաշվետու տարում այս խմբի ծախսերը կազմել են 11931749.6 հազար ՀՀ դրամ:

Սոցիալական պաշտպանություն

Պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 23.4 տոկոսը՝ 18309078.2 հազար ՀՀ դրամ, ուղղվել է բնագավառի պետական կառավարման և սոցիալական պաշտպանության միջոցառումների ծախսերի ֆինանսավորմանը, որից վատառողջության և անաշխատունակության՝ 80758.9 հազար ՀՀ դրամ, ծերության՝ 10342037.5 հազար ՀՀ դրամ, հարազատին կորցրած անձանց՝ 231600.0 հազար ՀՀ դրամ, ընտանիքի անդամներին և զավակներին՝ 4659337.4 հազար ՀՀ դրամ, գործազրկության՝ 38161.3 հազար ՀՀ դրամ,սոցիալական հատուկ արտոնությունների՝ 1260797.0 հազար ՀՀ դրամ և այլ սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացմանը՝ 1696386.1 հազար ՀՀ դրամ:

Հիմնական բաժիններին չդասվող ծախսեր

Հիմնական բաժիններին չդասվող ծախսերի գծով ֆինանսավորումը կատարվել է պետական բյուջեով նախատեսված ցուցանիշի 98.2 տոկոսի չափով և կազմել է 16423833.9 հազար ՀՀ դրամ, որը բյուջեի ընդհանուր ծախսերի 21.1 տոկոսն է: Այս բաժնի ծախսերում տեղ են գտել կապիտալ ներդրումները-13309070.0 հազար ՀՀ դրամ,հատուկ նպատակների ծախսերը-276000.0 հազար ՀՀ դրամ, գույքի գնման ծախսերը-293912.3 հազար ՀՀ դրամ,զորակոչման հետ կապված ծախսերը-143000.0 հազար ՀՀ դրամ, նախորդ տարիներից առաջացած պարտքերի մարում-27342.0 հազար ՀՀ դրամ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետական բյուջեից պետական տուրքի վճարումները-18682.4 հազար ՀՀ դրամ:

Հաշվետու տարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների ծախսերը կազմել են 369531.7 հազար ՀՀ դրամ, որոնք ըստ գործառնական դասակարգմամբ ներառված են պետական բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ:

Տնտեսագիտական դասակարգմամբ

Ըստ տնտեսագիտական բովանդակության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը, դրանց

80.1 տոկոսն ուղղվել են ընթացիկ ծախսերին, 19.9 տոկոսը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների իրականացման ծախսերի ֆինանսավորմանը:





Ընթացիկ ծախսեր

2014 թվականին ընթացիկ ծախսերի գծով պետական բյուջեից կատարվել է 62613674.4 հազար ՀՀ դրամի ծախս՝ կազմելով պլանավորված ցուցանիշի 95.9 տոկոսը:

Աշխատանքի վարձատրություն

Հաշվետու տարում աշխատանքի վարձատրությանն ուղղվել է ընթացիկ ծախսերի 25.6 տոկոսը կամ 16003269.7 հազար ՀՀ դրամ: Աշխատանքի վարձատրությանն ուղղված հատկացումների տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում կազմել է 20.5 տոկոս:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում

Բյուջեի ընթացիկ ծախսերում ներառվում են ծառայությունների և ապրանքների ձեռքբերման դիմաց կատարված պետական վճարումները: Այդ նպատակների համար օգտագործված 10532688.3 հազար ՀՀ դրամն ընթացիկ ծախսերի 16.8 տոկոսն է, իսկ ընդհանուր ծախսերի՝ 13.5 տոկոսը: Այն կազմել է պլանավորված ցուցանիշի 95.2 տոկոսը: Այս ծախսերում շարունակական ծախսերը կազմել են 1476275.8 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ էներգետիկ ծառայությունների ծախսերը-868573.5 հազար ՀՀ դրամ, կոմունալ ծառայությունների ծախսերը-30425.5 հազար ՀՀ դրամ, կապի ծառայությունների ծախսերը-362319.3 հազար ՀՀ դրամ, ապահովագրական ծախսերը-17714.5 հազար ՀՀ դրամ, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը-22461.2 հազար ՀՀ դրամ և արտագերատեսչական ծախսերը-174781.8 հազար ՀՀ դրամ; գործուղումների և շրջագայությունների ծախսերը կազմել են 433331.5 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ ներքին գործուղումների ծախսերը-333931.7 հազար ՀՀ դրամ և արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը-99399.8 հազար ՀՀ դրամ; պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են-6684729.4 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ վարչական ծառայությունների ծախսերը-9228.3 հազար ՀՀ դրամ, համակարգչային ծառայությունների ծախսերը-16313.8 հազար ՀՀ դրամ, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների ծախսերը-54.0 հազար ՀՀ դրամ, տեղեկատվական ծառայությունների

ծախսերը-81928.0 հազար ՀՀ դրամ, կառավարչական ծառայությունների ծախսերը-52279.9 հազար ՀՀ դրամ, կենցաղային և հանրային սննդի ծառայությունների ծախսերը-499.2 հազար ՀՀ դրամ, ներկայացուցչական գծով ծախսերը-109820.1 հազար ՀՀ դրամ և ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ծախսերը-6414606.1 հազար ՀՀ դրամ; այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 66685.8 հազար ՀՀ դրամ; ընթացիկ նորոգման և պահպանման(ծառայություններ և նյութեր) ծախսերը կազմել են 372603.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը-261536.7 հազար ՀՀ դրամ և մեքենաների ու սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը -111066.3 հազար ՀՀ դրամ; նյութերի (ապրանքների) ձեռքբերման ծախսերը կազմել են 1499062.8 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերման ծախսերը- 224318.8 հազար ՀՀ դրամ, վերապատրաստման և ուսուցման նյութեր ձեռքբերման ծախսերը-88.7 հազար ՀՀ դրամ, տրանսպորտային նյութերի ձեռքբերման ծախսերը-533645.9 հազար ՀՀ դրամ, առողջապահական և լաբորատոր նյութերի ձեռքբերման ծախսերը-321800.1 հազար ՀՀ դրամ, կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերման ծախսերը-141288.8 հազար ՀՀ դրամ և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման ծախսերը-277920.5 հազար ՀՀ դրամ:

Տոկոսավճարներ

Ներքին վարկերի տոկոսավճարները կազմել են 1538872.0 հազար ՀՀ դրամ, որը կազմում է ծրագրավորված ցուցանիշի 91.1 տոկոսը:

Սուբսիդիաներ

2014 թվականին պետական բյուջեից ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հատկացվել է 5644526.4 հազար ՀՀ դրամի սուբսիդիա, ինչը կազմել է ծրագրավորված ցուցանիշի 96.1 տոկոսը:

Դրամաշնորհներ

Ընթացիկ ծախսերի 11.2 տոկոսը կամ 7027111.7 հազար ՀՀ դրամը կազմել են համայնքների բյուջեներին տրվող դոտացիաները, պետական և համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններին տրվող ընթացիկ դրամաշնորհները, այդ թվում՝ ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին-38.0 հազար ՀՀ դրամ, ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին-9554.7 հազար ՀՀ դրամ, պետական բյուջեից համայնքներին տրվող դոտացիաներ-2109900.0 հազար ՀՀ դրամ, ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին-505679.8 հազար ՀՀ դրամ և այլ ընթացիկ դրամաշնորհներ-4401939.2 հազար ՀՀ դրամ:

Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ

Հաշվետու տարում սոցիալական նպաստների և կենսաթոշակների գծով վճարները կազմել են 17973626.1 հազար ՀՀ դրամ կամ նախատեսվածի 99.1 տոկոսը, այդ թվում՝ սոցիալական օգնություն դրամական արտահայտությամբ նպաստներ (բյուջեից)-

17973626.1 հազար ՀՀ դրամ, որից՝ հիվանդության և հաշմանդամության նպաստներ-266614.4 հազար ՀՀ դրամ կամ 100.0 տոկոս, մայրության նպաստներ-729091.1 հազար ՀՀ դրամ կամ 100.0 տոկոս, երեխաների նպաստներ-3299454.4 հազար ՀՀ դրամ կամ 99.7 տոկոս, գործազրկության նպաստներ-31850.3 հազար տոկոս դրամ կամ 98.0 տոկոս, հուղարկավորության նպաստներ-289900.0 հազար ՀՀ դրամ կամ 98.8 տոկոս, կրթական , մշակութային և սպորտային նպաստներ-135659.8 հազար ՀՀ դրամ կամ 93.2 տոկոս, բնակարանային նպաստներ-49282.3 հազար ՀՀ դրամ կամ 87.6 տոկոս, այլ նպաստներ-2938090.0 հազար ՀՀ դրամ կամ 95.9 տոկոս և կենսաթոշակներ-10233683.8 հազար ՀՀ դրամ կամ 99.9 տոկոս:

Այլ ծախսեր

Հաշվետու տարում այլ ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 6.2 տոկոսը, նախատեսված ցուցանիշը կատարվել է 92.3 տոկոսով կամ 3893580.2 հազար ՀՀ դրամ, այդ թվում նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին-184490.1 հազար ՀՀ դրամ, հարկեր, պարտադիր վճարներ և այլն, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ-50878.1 հազար ՀՀ դրամ, այլ ծախսեր-3374804.5 հազար ՀՀ դրամ և պահուստային միջոցներ-283407.5 հազար ՀՀ դրամ:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գումարը կազմել է պետական բյուջեի ընդհանուր ծախսերի 19.9 տոկոսը կամ 15512805.2 հազար ՀՀ դրամ ընդ որում ծախսերը կազմել են 15571051.9 հազար ՀՀ դրամ կամ ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 97.0 տոկոսով, այդ թվում՝ շենքերի և շինությունների կառուցում-14554865.2 հազար ՀՀ դրամ; մեքենաների և սարքավորումների ձեռքբերում-657707.9 հազար ՀՀ դրամ, որից տրանսպորտային սարքավոպումներ-85515.0 հազար ՀՀ դրամ, վարչական սարքավորումներ-100685.3 հազար ՀՀ դրամ և այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում-471507.6 հազար ՀՀ դրամ; այլ հիմնական միջոցներ՝ ոչ նյութական հիմնական միջոցներ-2315.5 հազար ՀՀ դրամ, գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր-75155.2 հազար ՀՀ դրամ, նախագծահետազոտական ծախսեր-281008.1 հազար ՀՀ դրամ :

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ներառված են բյուջեի ծախսային մասում բացասական նշանով, որը կազմել է 58246.7 հազար ՀՀ դրամ, ծրագրավորված ցուցանիշը կատարվել է 166.4 տոկոսով:

2014 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավա-րության պահուստային Ֆոնդից կատարված ծախսերի մասին

2014 թվականի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի գումարը հաստատված է եղել 2460000.0 հազար ՀՀ դրամ, փաստացի ծախսերը կազմել են 2254419.6 հազար ՀՀ դրամ:

